

9639

2075

281.6a
U-81p.

IV 7.

04 NOV 2009

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՏԷՐ ՏԵՂԱԿԱԼԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԳԵՈՐԳ ԱՐԲ-ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՈՒՐԷՆԵԱՆՑԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՄՐՏԱԳԻՒՆ ՆՈՒԷՐ

Տփլիսի Աազ եւ Միաբան համակրող

Ք Ա Հ Ա Ն Ա Ն Ե Ր Ի Ց

ԳՐԵՑ Ս. Բ. ԻՓԱԿԵԱՆՑ

Տ Փ Խ Ի Ս

Տպարան «Կուլտուրա», Բարձրակալա փող. № 14.

1911

2045

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՄԵՆԱՊԱՏԻԻ ՏԷՐ ՏԵՂԱԿԱԼԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

281.69.

U-81b

44

ԳԵՈՐԳ ԱՐԲ-ԵՊԻՍԿՈՊՈՍ
ՍՈՒՐԷՆԵԱՆՑԻ

ՀԲՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

61

ՄՐՏԵԳԻՆՆ ԶՈՒԼԻՐ

Տիխիսի Աւագ եւ Միսքան համակրող

ρ υ ζ υ τ υ ν ε ρ η θ

ԳՐԵՅ Ս. Ք. ԻՓԱԿԵԱՆՆՑ

S Φ Ι Ρ U

Տպարան «Կուլտուրա», Բաբոնսկայա փող., № 14.

1911

$$\begin{array}{r} 1005 \\ 21635 \end{array}$$


Յ Ա Ռ Ա Հ Ա Ք Ա Ն

«Սիճնի համար՝ չեմ լռիլ, և Երուսաղէմի համար՝ չեմ համբերիլ՝ մինչև որ նորա արդարութիւնը լոյսի պէս ծագի, և նորա փրկութիւնը փայլակի պէս վառուի և ազգերը պէտք է տեսնեն քո արդարութիւնը և թագաւորները քո փառքը, և քեզ պէտք է նոր անունով կոչեն՝ որ Տիրոջ բերանը կանուանէ. Յսայ. կբ. 1—2»:

Արդ, կաթողիկոսական ընտրութիւնը ահա մօտեցել է և այս առիթով լրագրներն էլ սկսել են շարունակ կաթողիկոսական կոչման համապատասխան և անհամապատասխան բարձր աստիճան հոգեւորականներին հրապարակ հանել, ոմանք մաքուր խղճով և ոմանք էլ յետին մտքերով. չգերադասելով ամենից աւելի ազգի և եկեղեցու շահերը, այլ յայտնի՝ ասելով՝ «Մեր ուզածը լինի, թող պակասաւոր և մի քիչ էլ անհամապատասխանը լինի փնաս չունի»։ Եւ այսպէս ամեն ներելի և աններելի միջոց գործ են դնում մի միայն իրենց թեկնածուի ընտրութիւնը յաջողացնելու համար. էլ չեն ուզում ուշադրութիւն դարձնել մարգարէի խօսքերին՝ որ ասում է. «Նորանց վերայ երիտասարդ իշխաններ կ'դնեմ, խաբեբաները պէտք է նորանց վերայ իշխեն, և ժողովուրդը պէտք է իրար հետ ընկնի, և ամեն մէկ մարդ իրա ընկերի հետ. մանուկը պէտք է ծերին հակառակուի և անարգը՝ պատուականին. Յսայ գլ. 4—5»։ Արդարեւ ահա հասել է այն ժամանակը՝ երբ մեր ազգի և եկեղեցու բաղդը պէտք է վճուրի կաթողիկոսական յաջող կամ անյաջող ընտրութեամբ:

Տփխիսի հոգևորականներս տեսնելով և լսելով այս բոլորը՝ չ'կամեցանք անշարժ և անտարբեր մնալ, որովհետև կաթողիկոսը ոչ թէ մի միայն ժողովրդի համար է՝ այլ համեմատաբար ևս առաւել մեզ համար՝ մեզ իշխելու և բարձրացնելու այս աննախանձելի դրութիւնից, որպէս մենք և ժողովուրդն է պահանջում. ուստի մենք սեպուհ պարտք ենք համարում շտապել իսկական համապատասխան և արժանաւորագոյն կաթողիկոսական թեկնածուի այժմեան տեղակալ Գէորգ արք-եպիսկոպոս Սուրենեանցի կենսագրութիւնը լրագրական վկայութիւններով ապացուցուած հրապարակ հանել, նոյնպէս մամուլին չ'հասած նորա պաշտօնական բեղմնաւոր գործունէութեան մասին զանազան տեղեկութիւնները, որ թէ ժողովուրդը և թէ պատգամաւորները կարգան և նորա գործերի հետ ի մօտոյ ծանօթանան և յետոյ նորա գործերը և արժանաւորութիւնները միւս թեկնածուների հետ համեմատեն և ապա առանց տատանուելու մօտենան քուէների տուփին և մաքուր խղճով գիտակցօրէն ամենից արժանաւորագոյնին տան իրանց քուէները:

Տփխիսի քահանաների մեծ խումբ



ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Գէորգ արք-եպիսկոպոս Սուրենեանցի, ամենապատիւ Տէր
Տեղակալի:

Գէորգ արքեպիսկոպոս Սուրենեանցը ծնուել է 1847
թուի օգոստոսի 28-ին Տփլիս քաղաքում, տոհմական ազ-
նուական ծնողներից:

Սկզբնական կրթութիւնը ստացել է Տփլիսում յայտ-
նի հայկաբան Կարապետ վարժապետ Բելախսեանի ուսում-
նարանում, յետոյ ուսել է Դաւիթ Արզանեանի պանսիո-
նում Հայերէն, Գաղղիերէն և Գերմաներէն, որ այն ժա-
մանակ ուսանում էին Տփլիսայ առաջնակարգ մարդկանց
որդիք, իսկ կանոնաւոր ուսման ընթացքը աւարտել է
Տփլիսայ Ա. կլասիքական գիմնազիոնում 1868 թուին:

Մանկական հասակից առանձին հակումն ունէր դէպի
հոգևոր կոչումն, իւր ութնամեայ հասակից արդէն Մօդ-
նու ս. Գէորգ եկեղեցում թաթախման երեկոները «Դա-
նիէլի» մարգարէութեան գիրքն էր կարդում տարիներ
շարունակ. իսկ գիմնազիական լիակատար դասընթացքը
աւարտելուց յետոյ, երբ մայրն ու մերձաւոր ազգական-
ները հոգում էին բարձրագոյն կրթութիւն տալ կամ պե-
տական ծառայութեան մէջ հաստատել, ուր կարող էր
շնորհիւ ընդարձակ ծանօթութիւնների շուտով առաջ գնալ,
Գէորգ սուրենեանցը սիրելով ազգային եկեղեցին շտա-
պով գնում է ս. Էջմիածին վանական դպրանալու և եկե-
ղեցուն ծառայելու ներքին բուն ձգտումով և ցանկու-

Ա մ ե ն ա պ ա տ ի ՚

Տ. ԳԵՈՐԳ ԱՐԳ-ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՈՒՐԵՆԵԱՆՑ

ՏԵՂԱԿԱԼ ԵՐԹՈՅՈՅՆՈՍ ԲՈՒՆԵՐՆԻ ԴԵՐՅՈՒՆ

թեամբ: Ազգի երջանկայիշատակ Գէորգ Դ. կաթողիկոսը, տեսնելով շնորհալի երիտասարդին՝ անմիջապէս սիրով ընդունում է նրան գործելու ս. էջմիածնում:

Ս. էջմիածնի ժառանգաւորաց դպրոցը պէտք ունենալով հմուտ ուսուցիչներին՝ հանգուցեալ կաթողիկոսն անմիջապէս կարգում է նրան այնպէս ընդհանուր պատմութեան, աշխարհագրութեան և թուաբանութեան դասատու, որպիսի պաշտօն վարեց 6 տարի շարունակ:

Գէորգ Սուրէնեանցը իւր ջանասիրութեամբ, համեստութեամբ և օրինակելի կարգապահութեամբ կարճ ժամանակում արժանանում է երջանկայիշատակ Գէորգ Դ. կաթողիկոսի վստահութեանը և նորին Սրբութեան օրհնութեամբ՝ նոյն 1868 թ. դեկտեմբերի 14-ին ընդունւում է Մայր Աթոռի միաբան, իսկ 15-ին ս. Գայեանէի վանքում ձեռնադրւում սարկաւադ:

Ուսուցչութիւնը Մայր Աթոռի ժառանգաւորաց դպրոցում, երեքամեայ սարկաւադութեամբ՝ սպասաւորութիւնը Մայր Տաճարում և գիտակցութիւնը՝ թէ լաւ պաշտօնեայ լինելու համար պէտք է գիտենալ եկեղեցու կարգ ու կանոնները, վարդապետութիւնն ու պատմութիւնը պսակում են Գէորգ սարկաւադի ջանքը յաջողութեամբ, որին անձամբ հասու լինելով երջանկայիշատակ Գէորգ Դ. կաթողիկոսը, որ այսպիսի խնդիրներում շատ զգոյշ էր՝ տալիս է իւր օրհնութիւնը և բարեհաճութիւնը և Գէորգ սարկաւադը 1871 թ. ապրիլի 15-ին ձեռնադրւում է աբեղայ, իսկ 1871 թ. մայիսի 3-ին ստանում վարդապետական մասնաւոր իշխանութիւն, նախընթաց մեծ պատին Վաղարշապատի եկեղեցում մի քանի անգամ քարոզելուց յետոյ:

1870 թուի յունվարի 30-ին նշանակւում է անդամ նորակազմ տպարանական ժողովի և այդ պաշտօնը կատարում է նա ամենայն եռանդով: Ամբողջ տպարանի

գրքերի և թղթերի պահեստը, որպէս և տարեկան ծախքը Գէորգ վարդապետին էր յանձնուած: Թղթի մթերանոցի բալանինները ոչ ոքի չհաւատալով՝ ինքն էր իւր ներկայութեամբ համարել տալիս տպագրութեան հազարաւոր թերթերը, որպէս զի անհաւատարիմ ձեռք չկարողանայ ֆասել Մայր Աթոռի շահերին: Այն աստիճան նուիրուած էր գործին, որ ճաշելու էր գնում շատ ուշ, միայն գործը վերջացնելուց յետոյ:

Գէորգ վարդապետը իբրեւ գործունեայ, հասկացող երիտասարդ, շուտով իր աջալըջութեամբ և հաւատարմութեամբ գրաւում է հոգեւոր ծայրագոյն իշխանութեան ուղղութիւնը: Տ. Գէորգ կաթողիկոսի հրամանով նորանոր պաշտօններ և յանձնարարութիւններ տրուեցան նրան, որոնց բոլորն էլ կատարում էր իրեն յատուկ հաւատարմութեամբ: 1872 թ. մարտի 28-ին նշանակւում է Մայր Աթոռի ժառանգաւորաց դպրոցի վերատեսուչ, այդ ժամանակ ուղղութիւն է դարձնում որպէս ուսման, նոյնպէս և մաքրութեան վրայ: Ուսուցչութեան են հրաւիրւում հայր Եղիան, հայր Վահանը և պարոն Արշակ Տէր-Յովսէփեանցը: Գէորգ վարդապետի միջնորդութեամբ հասակաւոր աշակերտները արժանանում են չորրորդ աստիճանի դպրութեան և դառնում արժանաւոր կուսակրօն հոգեւորականներ: Իսկ ընդունակ և յառաջադէմ փոքր աշակերտներին ևս միշտ քաջալերում էր հայրաբար, որոնցից մի քանիսը յետոյ նոյնպէս շնորհալի վարդապետներ դարձան:

Սինոդի հրամանով, 1874 թ. մայիսի 25-ին, Գէորգ վարդապետը ուղարկվում է Բեսարաբիա նորաբաց ձեմարանի համար ընդունակ աշակերտներ ընտրելու: Վեհափառ Հայրապետի հրամանով նոյն թուի սեպտեմբերի 28-ին նշանակւում է նորաբաց ձեմարանում ուսուցիչ ընդհանուր պատմութեան և աշխարհագրութեան, որ վարեց

մինչև 1875 թ. հոկտեմբերի 4-ը: Նոյն ամսին կարգւում է փոխանորդ թեմին Ղարաբաղու և տեսուչ տեղական թեմական դպրանոցի: Ճեմարանի տեսուչ սրբազան Գաբրիէլ արքեպիսկոպոս Այվազեանը դժուարանում էր արձակել Գէորգ վարդապետին ճեմարանից, որովհետև մեծ վստահութիւն ունէր նրա վրայ և ընդունում էր իբրև անկեղծ բարեկամի: Իւր կարճ պաշտօնավարութեամբ իսկ օգտակար եղաւ Ղարաբաղում:

Շուշին կարօտութիւն ունէր օրիորդայն ուսումնարանի, մի տարի առաջ տեղական հաշտարար դատաւորի ձեռքով բացուած դպրոցը բաւարարութիւն չէր տալիս. ուստի Գէորգ վարդապետը ամենայն ջանք գործ է դնում և կարճ ժամանակում յաջողեցնում բանալ երկրորդ իգական հոգևոր դպրոցը, որ կոչուեց Ս. Հռիփսիմեան հայոց օրիորդաց դպրոց: (Մեղու Հայաստանի 1876 թ. 28): Նոյնպիսի դպրոց ս. Գայիանեան անունով բանում է Լէնքորանում և օծում այնտեղի եկեղեցին, որ 18 տարի վեղաբաւոր չէր այցելած:

Եկեղեցական և դպրոցական շքեղ հանդէսները Լէնքորանում այնպիսի խոր տպաւորութիւն են գործում այն անտէրունջ և անմխիթար ժողովրդի վրայ, որ արտասուքով էին յայտնում իրենց հոգեկան մխիթարութիւնը: Գէորգ վարդապետի յորդորների ազդեցութեան տակ, ոչ թէ միայն Հայերը օգնեցին դպրոցի ապահովութեան զբաւական նպաստով այլ և Ռուս ազգի նշանաւոր ծառայողները և Թուրք բէգերը: (Մեղու Հայաստանի 1876 № 23): Իւր պաշտօնավարութեան ժամանակ Գէորգ վարդապետը միշտ վստ էր պահում իւր մէջ ջերմ սէր դէպի Մայր Աթոռը. այսպէս 1876 թ. Ղարաբաղում գտնելով Աղուանից կաթողիկոսութեան փոխակրեայ քանդակագործ գաւազանը՝ ուղարկում է Տ. Գէորգ կաթողիկոսին Մայր Աթոռի թանգարանի համար, որից և ստանում օրհնութեան և

գոհունակութեան կոնդակ և հեռագրական շնորհակալութիւն:

Թէ ինչպիսի յարգանք էր վայելում Շուշում այդ ամսին տեսնել Արշալոյս արարատեան լրագրի 1876 թ. № 1049 տպուած այն հրաւէր խնդրագրի մէջ, որ Շուշեցիք, ուղղել էին իրենց առաջնորդ Զալալեանց արքեպիսկոպոսին», բարեշնորհ Գէորգ վարդապետ Սուրէնեանցը յընթացս կարճ միջոցի, այն է ութամսեայ ժամանակի իւր համեստաբարոյութեամբ, ազնիւ հոգւոյն բարեզգացմամբ և ընդդէմ զանազան խոչընդոտն արգելանաց՝ իւր ձեռնարկութեանց մեծաջան աշխատասիրութեամբքն մխիթարեց մեզ հոգևորապէս, արդարացոյց Ձերդ բարձր Սրբազնութեան բարենպատակ ընտրութիւնն և մեր բոլորիս համակրութիւնն միանգամայն գրաւեց առ ինքն, զոր ոչ կարեմք երբէք մոռանալ շնորհակալու հոգով և մտօք»:

Սինոդի հրամանով Գէորգ վարդապետը 1877 թուի յունվարի 31-ին նշանակւում է Վերին Ազուլիսի ս. Թովմայ առաքելոյ վանքի վանահայր և տեսուչ ու ուսուցիչ երկու սեռի դպրոցների, որ վարեց մինչև 12-ն հոկտեմբերի 1878 թ.: Այնտեղ կարճ ժամանակում դպրոցները մեծ յառաջադիմութիւն ցոյց տուին, որովհետև դպրոցի համար լաւագոյն ոյժեր է հրաւիրում թէ Տփլիսից և թէ տեղական խմբերից, ինչպէս Յակովբ Մելիք-Յակովբեանցին (Բաֆֆի), Կարապետ Էդելխանեանցին (Օդեսայի համալսարանից) և տեղական ուսուցիչներից հայր Մեսրոպին, պ. Միսնասարեանցին, պ. Դաւիթ Քալանթարեանցին:

Ինքը Գէորգ վարդապետը ամենայն սիրով եռանդով նուիրւում է գործին: Իբրև վանահայր առաւօտ և երեկոյ անխափան կատարում է ժամերգութիւնը, վանքը և շրջապատ շինութիւնները հիմնովին նորոգում: Վանական հոգաբարձութեան աջակցութեամբ:

Նախկին վանահայրերի ժամանակ հոգաբարձուները վայելում էին անսահման իրաւունք, վանահայրերը չէին միջամտում նրանց գործում: Բայց Գէորգ վարդապետը այնպիսի յարգանքն էր վայելում և այնպիսի հմտութիւն և աշակցութիւն ցոյց տալիս, որ հոգաբարձուները միշտ իրենք էին դիմում և նրա խորհրդով գործում և նրա ամեն առաջարկութիւնները կատարում: Իբրև տեսուչ և ուսուցիչ նա ցոյց է տալիս մեծ եռանդ, ժամերգութիւնից յետոյ նա կանոնաւոր կերպով յաճախում է դասերի և հսկում դպրոցներին՝ չնայած նրանք միմեանցից բաւականին հեռու էին գտնւում և ճանապարհն էլ զարիվայր էր անհարթ և ձմեռը սառուցով պատած: Նրա տեսչութեամբ գործը յառաջ էր գնում գովելի կերպով:

Գէորգ վարդապետի բնակարանը, ինչպէս Ագուլեցիքը են վկայում չէր նմանում վարդապետական խցի, այլ ուսանողական սենեակի, նրա գրասեղանը լիքն էր ամենատեսակ նորանոր հրատարակութիւններով և լրագիրներով: Թէ ուրախութեան և թէ տրտմութեան ժամանակ Ագուլեցոց ցանկալի էր Գէորգ վարդապետի ներկայութիւնը և նրա մասնակցութիւնը առանձին մխիթարութիւն էր պատճառում նրանց: Աշխարհատես Ագուլեցիք ի սրտէ յարգում էին նրան: Նորա մասին գովեստով և յարգանքով է խօսում Բաֆֆին: «Պատկերներ Բաֆֆիի կեանքից» գրքոյկում տպեալ Աղէքսանդրապօլ 1904 թ, տպարան Ս. Մ. Մալխասեանցի երես 127 Բաֆֆին գրում է Սուրէնեանցի մասին հետեւեալը. «Վանքի գաւթումն է (Ս. Թովմայ առաքելոյ) նա և տղայոց դպրոց, այստէղ է կենում և վանահայրը հայր Սուրէնեան Վարդապետը, որ միանգամայն թէ փոխառաջնորդ է և թէ տեղոյս երկսեռ դպրոցների տեսուչ, այլ և դասեր ունի աշխարհագրութեան և ընդհանուր պատմութիւնից. հայր Սուրէնեանը մի երիտասարդ կրօնաւոր է, որ վարդապետական վեղարի տակ

պահպանել է ուսանողի և ուսումնականի մաքուր բնաւորութիւնը. շատ եռանդով և ազնիւ մարդ է»:

Գէորգ վարդապետի Ագուլիսից Ալէքսանդրապօլ փոխանորդական պաշտոնով մեկնելու օրը՝ մի առանձին տեսարան էր ներկայացնում: Ամբողջ Ագուլիսը ոտքի վրայ էր. Ս. Թովմայի առաքելոյ վանքի ընդարձակ սրահը լիքն էր ժողովրդով. Առաջին իշխանից սկսած մինչև վերջին այգեպանը, եկել էին իրենց վերջին յարգանքը մատուցանելու և հրաժեշտի օրհնութիւնը ստանալու իրենց սիրեցեալ հոգևոր հովից:

Ամբողջ ժողովուրդը 4 վերստ ճանապարհ է ձգում մինչև Ներքին Ագուլիսի այգիները, ուր կառք նստելով սլանում դէպի Օրդուբաթ, ուր տեղական կառաւարիչը շքեղ ճաշ էր պատրաստել նրա պատուին:

Սինօդի հրամանով 1878 թուին հոկտեմբերի 12-ին կարգւում է Ալէքսանդրապօլի վիճակի փոխանորդ: Քաղաքը բաժանուած և պառակտուած էր երկու կուսակցութեանց, որի պատճառով հասարակական գործերը մեռելութեան էին դատապարտուած:

Ալէքսանդրապօլում Գէորգ վարդապետը աւելի մեծ յաջողութիւն է ունենում. իւր խոհեմ վարմունքով և կառաւարչական հմտութեամբ վերջացնում է այնտեղ կուսակցական երկպառակութիւնները, որի համար Գէորգ կաթողիկոսը յայտնում է նորան իւր գոհունակութիւնը և անուանում նրան «Հրեշտակ Խաղաղութեան»:

Նորա անխոնջ աշխատութեամբ հիմնարկվում է Ս. Փրկիչ եկեղեցու սրահում հոյակապ դպրոցական շէնքը. նա է հիմնարկում քաղաքի Աստուածամօր հրազարդ եկեղեցին, որ ճարտարապետական մի հրաշալի գործ է. նոյնպէս հիմնարկում է Ս. Աստուածածնի միւս եկեղեցին: Երկու եկեղեցիներն էլ այնպիսի խարխուլ դրութեան

մէջն էին, որ թէ մի տարի էլ մնային, յանկարծ քանդուելով, մեծ զոհ պէտք է տանէին:

Նա ևս Փրկիչ եկեղեցու շրջապատ նորակառոյց կրպակները, որ վարձով էին տրուած չնչին գնով, մեծ աշխատութեամբ և շատ թշնամիներ վաստակելով կարողանում է վարձագները կրկնապատկել, եռապատկել: Բացի սրանից Ալէքսանդրապօլի վիճակի շատ գիւղերում հիմնարկում է շատ եկեղեցիներ և բացում դպրոցներ:

Գէորգ վարդապետը սիրելի էր առաւել գիւղական ժողովրդեան իւր դիւրամատչելի, բարեբարոյ և անշահասէր բնավորութեան համար: Երկրորդ Աստուածամօր եկեղեցու մօտ ևս բաւականաչափ տեղ ձեռք բերելով դպրոցի շինութեան հիմքն է ձգում:

Նա այնպիսի ժողովրդականութիւն էր վայելում, որ երբ 1879 թ. տ. Գէորգ կաթողիկոսը կառուցանում էր Օշականում ս. Մեսրոպի դամբարանի վրայ եկեղեցին, Գէորգ վարդապետը հանգանակում է Ալէքսանդրապօլում 1500 ո. և ուղարկում հայրապետին:

1881 թ. յունիսի 1-ին Գէորգ վարդապետը կարգւում է փոխանորդ թեմակալի Երեանի թեմի և 1882 թ. Մայիսի 9-ին երջանկայիշատակ Գէորգ Գ. Կաթողիկոսից ձեռնադրւում եպիսկոպոս Ս. Էջմիածնի Մայր տաճարում:

Գէորգ սրբազանը հոգ է տանում ժողովրդի հոգևոր և մտաւոր դաստիարակութեան, եկեղեցիների բարեգործութեան և բարեկարգութեան, պաշտօնեաների պարտաճանաչութեան և բարեխղճութեան, վնասակար սովորութիւնների վերացման: Նւ արձագանք տալով ժողովրդեան լաւագոյն իրձերի՝ գործում է ամենայն եռանդով, հետամտութեամբ, հմտութեամբ, Քրիստոնէական խաղաղասիրական ոգով, ամենքի մէջ ներշնչելով հոգի, տրամադրութիւն և պատրաստակամութիւն գործելու յօգուտ դպրոցների և եկեղեցիների յառաջադիմութեան:

Ահա թէ ինչ է գրւում Մշակում նրա մասին դեռ նրա պաշտօնավարութեան սկզբում. — «Կէս տարուց աւելի կլինի, որ Երեանի թեմակալ առաջնորդի պաշտօնը վարում է Սուրէնեան Գէորգ վարդապետը: Եթէ չեմ սխալվում այդ մարդը հանգուցեալ Ստեփանոս Եպիսկոպոսից յետոյ առաջինն է, որ ամենքը յարգանքով են խօսում դրա մասին»: Մշակ. 1882 թ. № 23.

Նա հիմնաւոր կերպով նորոգել է տալիս քաղաքի բոլոր եկեղեցիները, որ միանգամայն անշքացած էին. նորոգել առաւ առաջնորդարանը և կոնսիստորիան: Երեան քաղաքի կենդրոնում 1868 թուին հիմնարկած Ս. Գրիգոր Լուսաւորչի եկեղեցու պատերը մի սաժէն և կէս գետնից բարձրացնելով 1870 թ. թողել էին կիսաշէն և սրահը անպարիսպ լինելով Պարսիկների աղբանոց էր դարձած:

Գէորգ սրբազանը տեսնելով սրբատեղին արհամարում և անուշադրութեան մատնուած, ժողով է կազմում առաջնորդարանում և ժողովին յայտնում, որ կամ այն սրբատեղին հիմնովին քանդեն, որ ծաղր ու ծանակ չլինին օտար քրիստոնեաների առաջ և կամ շինութիւնը շարունակեն ի փառս Աստուծոյ և ի հոգեկան մխիթարութիւն բարեպաշտ ժողովրդեան, յարակցելով, որովհետեւ նկատում է դեռ ևս Երեանցոց մէջ ազգասիրական և կրօնասիրական զգացմունքը կենդանի, ուստի առաջարկում է ընտրել շինութեան համար նոր հոգաբարձուներ և շարունակել գործը: Սրբազան հօր ազդույորդորը ներգործելով ներկայ եղողների վրայ՝ անմիջապէս նոր հոգաբարձուներ են ընտրում ամենապատուական և գործին նուիրուած անձերից և Նորին Սրբազնութիւնից ստանալով հաստատութեան հրաման և ժապաւինեալ տոմար՝ բաւականին գումար են ժողովում և առաջին տարին իսկ ընդարձակ դաւիթը շրջապատում ամուր պարիսպով, Հետեւեալ տարին սրբազանը ցուցակով ընտրելով 30 մարդ՝

հրաւիրում է իր մօտ և յորդոր կարգում նրանց: Ներկաները խոստանում են սրբազան հօր ցանկութեան համեմատ տարեկան վճարել 100 ռ. հինգ տարի ժամանակով: Այդ ժողովում ստացւում է կանխիկ 4000 ռուբլի և այդպիսով Սրբազանը կարողանում է հասնել իր նպատակին: Եկեղեցու շինութիւնը շարունակւում է անընդհատաբար, նորա իսկ ներկայութեամբ: (Նոր-Դար 1886 թ. № 99): Նոյն լրագրում յօդուածագիրը գրում է. «Այս եկեղեցու շինութիւնը լրացնելու պարտականութիւնը կարծես վերապահուած էր մեր Սրբազան առաջնորդ Սուրէնեանցին, որպէս զի դրա համար տեսակ տեսակ նեղութեանց իւր անձը ենթարկէ և տանջանքի փառքը ինքն ընդունէ»:

Թեմական դպրանոցն բաղկացած էր միայն երեք դասարանից և գտնւում էր նիւթական սուղ գրութեան մէջ. ամեն միջոց գործ է դնում դպրանոցն ըստ ամենայնի բարեկարգ վիճակի մէջ դնել, դասարանների թիւը ընդարձակել և իւր անուան համապատասխան դիրքի վերածել: Նա ձեռք ձեռքի տուած հոգաբարձութեան հետ գործում է յօգուտ թեմական դպրանոցի բարեկարգութեան: Դասարանների թիւը հասցնում է մինչև հինգերորդի (Նոր-Դար 1886 թ. № 157). վեցերորդի օրագիրն էլ ստորագրում է Աստրախան մեկնելուց առաջ:

Նրա առաջնորդութեան ժամանակ դպրոցն ունէր արժանաւոր տեսուչներ, որք էին Սարգիս Բէգնազարեանց և Աբիսողոմ Յովհաննիսեան: Նրա օրով առատանում են ամեն տեսակ նուիրատուութիւններ: Աշխատում է և ամեն ջանք գործ դնում վերացնելու մեռելահացի վատ սովորութիւնը և նրա փոխացէն յօգուտ թեմական դպրոցի նուէր տալու: Մշակի 1886 թ. № 54-ում գրած է. «Քաղաքիս երեւի հարուստ Գէորգեանի որդին 22 ամեահասակում յանկարծամահ եղաւ մայիսի 2-ին. Սրբազան Սուրէնեանը առաջարկեց հանգուցելոյ հօրը, որ իբրեւ երե-

ւելի անձն օրինակ տայ հասարակութեան, փոխանակ «հոգէհացի» 200 ռ. նուիրէ թեմական դպրոցին: Եւ միևնոյն ժամանակ թեմական դպրոցին կից մի մեծ դահլիճ շինել տայ ի յիշատակ:

Այս առաջարկութիւնը սիրով ընդունում են Գէորգեան եղբարք: Մի ուրիշ անգամ ևս նոյն եղբարք նուիրած են 500 ռուբլի նոյն դպրանոցին: Օրհնուի նրանց յիշատակը և շնորհակալութիւն Ս. Սուրէնեանցին: Նոյն առթիւ Նոր-Դարի 1886 թ. № 68 գրում է յօդուածագիրը Երեանից «Պօրին շնորհակալութիւն Ս. Սուրէնեանցին որ աշխատում է մեռելահաց տալու սովորութիւնը վերջացնել»:

Գէորգեան եղբայրները կատարում են իրենց խոստումը: Մինչև Գէորգեանի սկսուած գալը, մօտ հինգ տարի առաջ, հոգաբարձութեան խնդրի համաձայն Սինօդն հրամանագրել էր, որ եկեղեցիների դրամագլուխների տոկոսները յատկացնեն թեմական դպրանոցի պահպանութեանը, բայց բոլոր եկեղեցիների ծխականները բացէ ի բաց մերժել էին յիշեալ հրամանի կատարումն: Գէորգ սրբազանը իւր Երեան գալու երկրորդ տարին իւր հեղինակութեամբ և անխոնջ աշխատութեամբ կարողանում է ընդհանուր ծխականներին համոզել և եկեղեցիների դրամագլուխների տոկոսները յատկացնել թեմական դպրանոցի պահպանութեան, և այդ մեծագումար հաստատ աղբիւրը մինչև այսօր վայելում է դպրանոցը (Մշակ 1882 թ. № 204):

Նա ջերմ կողմնակից է լինում և դպրոցի ուսումնական մասի յառաջդիմութեան և աշխատում այդ մասին: Մշակի 1886 թ. № 71-ում գրուած է, Երեանից. «Թեմական դպրոցի նոր հոգաբարձութիւնը մտադիր է կազմել նոր ուսուցչական խումբ: Անհերքելի է, որ իւրաքանչիւր ուսումնարանի յառաջդիմութեան գլխաւոր պայ-

մանը վարժապետների օրինաւոր կազմակերպութիւնն է: Ուսուցչական նոր խումբ կազմելուն ջերմ կուսակից է թեմիս առաջնորդ Սրբազան Սուրենեանցը, ուստի յոյս կարելի է ունենալ, որ Երեւանի թեմական դպրոցը առաջիկայ սեպտեմբերից կունենայ ուսուցչական մի նոր խումբ: Իսկ Նոր-Պարի 1886 թ. № 87-ում. «Երեւանից մի քանի թղթակցութիւններ ենք ստացել, որ այնտեղի թեմական դպրոցի նոր տեսչի բնաւորութիւնն է վերաբերում... Մենք ուզում ենք հաւատալ, որ զեր. Սուրենեան Սրբազանի պէս արթուն առաջնորդը, նոյնպէս նորընտիր հոգաբարձութիւնը տեսուչ ընտրելու ժամանակ ի նկատի կառնեն հոգևոր դպրանոցի յառաջդիմութեան գործը միայն...»: Եւ Գէորգ սրբազանը միշտ արդարացնում էր ժողովրդի յոյսերը:

Երբ 1884 թուին կառավարութեան հրամանով ծխական դպրոցները փակուեցան, բացի թեմական դպրանոցից՝ Դէորգ եպիսկոպոսը թոյլ չտուաւ, որ մի աշակերտ էլ զրկուի ուսումից, ամենքին էլ ընդունում է թեմական դպրանոցը՝ հիւրընկալում և պատսպարում նրանց այնտեղ. մինչև անգամ թեմական դպրանոցի նախագահի թը պատով բաժանել տալով և առանձին դասարան որոշելով՝ պահպանում է նրանց այնտեղ մինչև ծխական դպրոցների վերաբացումը:

Գէորգ Սրբազանի թեմական դպրանոցի վերաբերութեամբ ցոյց տուած հոգացողութեան և խնամքի մանրամասնութեանց մասին կարելի է ծանօթանալ նոյն դպրանոցի յիսնամեայ յօրեւանի պատմութեան մէջ, ուր պարզ երևում է, որ ոչ մի առաջնորդ այնքան չէ գործել ուսումնական ասպարէզում, որչափ նա: Եթէ Երեւանի դպրանոցը մեզ շատ նիւթականապէս ապահով վիճակ ունեցաւ պարտական է Սրբազանի անդուլ ջանքերին:

Ազգային իրաւունքներին նուիրուած լինելու մասին նշանակալից է կարդալ Արևելք 1885 թ. № 358:

Երեւանի եկեղեցիները Սուրենեանց Սրբազանի ժամանակ իրենց ներքին և արտաքին դրութեամբ, պաշտօնեաների կարգապահութեամբ և հաշիւների կանոնաւորութեամբ և դպրոցներն իրենց յառաջդիմութեամբ և բարեկարգութեամբ ցոյց են տալիս Սրբազանի գործունէութիւնը և հսկողութիւնը:

Նա հրաւիրում էր քաղաքի քահանաներին, դպիրներին, ժամհարներին և երեցփոխներին ժողովների. իմաստալից կերպով բացատրում էր նրանց վանքերի և եկեղեցիների բուն նշանակութիւնը և նրանց ծառայողների որոշ, որոշ պարտականութիւնները, և տալիս էր նրանց կանոնական պատուէրներ, որոնցից կլիշեմ մի երկուսը. այսպէս՝ հսկել եկեղեցիների մաքրութեան ըստ ամենայնի. ժողովրդեան աւելորդ ծախքերից ազատելու համար, յետ թաղման ննջեցեալների համար տանը ամբիժք չկատարել. իւրաքանչիւր ծխական քահանայ իւր յորդորներով համոզել և արգելել ննջեցեալի տիրոջ մեռելահաց տալը. գործակալների հրամանները ճշտութեամբ կատարել: Երեցփոխները արթուն հսկողութիւն ունենան եկեղեցու ամեն տեսակ կարեւորութեանց վրայ և աշխատեն պահպանել եկեղեցապատկան փողերը. առանց հոգևոր իշխանութեան հրամանի մեծ ծախք չանել կայն կայն: (Նոր-Պար 1886 թ. № 99):

Նա իւր անկաշառ, ազգաշէն և ժողովրդասէր ծառայութեամբ այնպիսի մի հեղինակութիւն էր վայելում, որ նրա ամեն մի խօսքը ընդունելի էր իւր հօտի համար. երբէք նրա առաջարկութիւնները մերժումն չեն ստացել: Նա միշտ աշխատում էր իւր ժողովուրդը խաղաղութեան մէջ պահելու և հեռու ամեն մի կուսակցութիւնից: Երբ 1881 թ. ս. էջմիածնի մարտի համար առանձին տպա-

21635



գրեալ տոմսակներով կամաւոր տուրք էին ժողովում՝ Գէորգ եպիսկոպոսը առաջնորդարանում մէկ ժամուայ մէջ 1000 ռուբլի է ժողովում, անհամեմատ աւելի միւս վիճակներից: Նա հոգեւոր իշխանութեան հրամանը, ժողովողի և դպրոցների օգուտը և յառաջադիմութիւնը բարձր էր դասում իւր անձնական անդորրութիւնից և շահերից, իբրև իսկական հովիւ, որ իւր անձը դնում է իւր հօտի համար: Երբ Ալէքսանդրապօլում դպրոցական գործը զանազան խանգարիչ մարդկանց ձեռքով վտանգւում էր և միադասեան դպրոցների հոգաբարձական ընտրութիւնը խանգարւում, իսկ դպրոցները փակուած մնալով թշուառ մանուկները դատապարտուած էին փողոցներում թափառելու՝ Ս. Սինօզը և Վեհափառ օգտաւէտ համարեցին յանձնել այդ գործը Սուրէնեանց եպիսկոպոսին, որ անձամբ գնալով Ալէքսանդրապօլ ծանօթանայ դպրոցական գործերին, ժողով կազմէ և հոգաբարձուներ ընտրել տայ:

Սրբազան հայրը մի անգամ ևս կամենալով ցոյց տալ իր հայրական խնամքն և սէրը դէպի Ալէքսանդրապօլի հայ հասարակութիւնը և առ ոչինչ համարելով ձմեռային ճանապարհորդութեան հետ կապուած բոլոր դժուարութիւններ՝ շտապում է գնալ Ալէքսանդրապօլ, ուր ժամանում 1887 թ. է փետրուարի 7-ին և անմիջապէս սկսում է գործել ամենայն արդարութեամբ, որպէս վայել էր իւր կոչման: Փետրուարի 21-ին կազմում է ժողով աւելի քան 115 ընտրեալ անձերից: Ժողովը կանոնաւոր և ապահով անելու համար՝ Սրբազան հայրը գործ է դնում կարևոր միջոցներ, որով նա սկսում է կանոնաւոր կերպով և վերջանում խաղաղութեամբ, ընտրելով ծխական դպրոցների համար արժանաւոր հոգաբարձուներ: Իսկ երկդասեան ծխական դպրոցի հոգաբարձութեան, որոնք իրենց պարտազանցութեամբ, դպրոցական եկամուտները վատնելով պատճառ էին դարձած ժողովրդեան մտքերը պղտորելուն

և երկպառակութեանց՝ արձակում է իրենց պաշտօնից, իսկ այդ դպրոցի 16 ամեայ հաշիւը քննելու համար կազմում է մի մասնաժողով և յանձնում նրանց: Մոմավաճառութեան կրպակը արձակուած հոգաբարձութեան ձեռքից վերցնելով՝ յանձնում է եկեղեցիների երեսփոխներին տարեկան 2400 ռուբլիով՝ անհամեմատ բարձր նախկին տարիներից, կանոնաւորում է նաև կրպակների վճարներն. (Նոր-Պար 1887 № 30):

Ալէքսանդրապօլում եղած ժամանակ ս. Վարդանանց յիշատակը չքեղ հանդէսով է տօնում: Նախկին տարիներում հանդէսը կատարելիս են եղել առաւօտեան, իսկ Սրբազանը պատուիրում է ճաշին անել. պատարագամատոյցն ինքն է լինում և առանձին շուք է տալիս հանդիսին իր ներկայութեամբ. տաճարը լցւում է բազմութեամբ: Ս. պատարագը վերջանալուց յետոյ սրբազանը խօսում է մի ազդու քարոզ, ասելով. «Ս. Վարդանանց նահատակութեամբ է, որ այսօր Հայաստանեայց առաքելական ս. եկեղեցին կանգնած է. Ս. նահատակները չէին կարող այն պանծալի յաղթութիւնը կատարել, եթէ նրանք ուսած չլինէին ս. Սահակի և Մեսրոպի Աստուածատուր ուսումը. ինչպէս Վարդան զօրավարը և ս. Ղևոնդ սիրով ձեռք ձեռքի տուին և այնպէս առաջ տարան գործը, մենք ևս պարտաւոր ենք սիրով, համերաշխութեամբ միաբանել գործելու և կռուելու այն սոսկալի թշնամու դէմ, որի անունը տգիտութիւն է. գործը կատարեալ չէ, երբ գործող սրտերի մէջ համերաշխութիւն չկայ, իսկ ընդհակառակն երբ մարդիկ սիրով, միաբանութեամբ և համերաշխութեամբ են գործում՝ նպատակը միշտ յաջողւում է և աշխատութիւնը պսակւում պանծալի գործերով»:

(Նոր-Պար 1887 № 23) Այդպիսով ժողովրդեան սրտերի մէջ սիրոյ, միաբանութեան և համերաշխութեան ոգի սփռելով վերադառնում է Երևան:

Այցելում է նաև Տաթևի և Հին Նախիջևանի վիճակները, կարգի է ձգում վիճակային գործերը և կարողանում է 5000 ռուբլի էջմիածնի Աթոռին հասանելի անյուսալի ապառիկները ժողովել:

Պէտք է ասել, որ Գէորգ Սրբազանը իր պաշտօնավարութեան մէջ եղել է խիստ կարգապահ. իբրև իշխանաւոր խստապահանջ, արժանաւոր և հաւատարիմ ստորադրեալներին ի սրտէ յարգող և ժողովրդեան կարիքներին հոգ տանող: Իր վարչական գործավարութեան մէջ նա արդարասէր էր, ճշտապահ, եռանդուն գործ կատարող: Ահա մի օրինակ. Մշակ լրագրի 1887 թ. № 44 գրում են Նոր - Բայազէթից. «զինուորագրութեան կոչնագրերում սպրդած սխալները անթիւ են... Դրանք (ժողովուրդը) ստիպուած են Նրեան գնալ կոնսիստորիայից ծննդեան վկայականներ դուրս բերել. պատմում են, որ կոնսիստորիայում ասեղ գցելու տեղ չկայ: Նրեանի ամբողջ նահանգը այնտեղ է հաւաքուել. կոնսիստորիայի գրադիրներ լի վարմունքից շատերը գոհ չեն, չնայած սրբազան Սուրէնեանցի արթուն հսկողութեան և մշտական յանդիմանութիւններին: Կոնսիստորիային դիմողները միայն շնորհակալ են Սուրէնեանից նրա արդարասէր գործունէութեան պատճառով»:

Գէորգ սրբազանը նոյնպէս վերին աստիճանին ճշմարտախօս է. նա չգիտէ կեղծել, շողոքորթել, գիտէ իւրաքանչիւրին իրեն արժանի յարգանքը մատուցանել: Մշակի 1886 թ. № 26-ում Նրեանի թղթակիցը գրում է, որ եկեղեցում Վարդանանց տօնին Գէորգ Սրբազանը տեսնելով միայն օտարականների, մինչդեռ Նրեանցիները բազում զբօսնում էին՝ բացականչում է. «Նա հաւատացած եմ, որ 1036 վկաների մէջ մի հատ Յրեանցի ևս չի եղել» և այս դառն ակնարկը շատերին վշտացնում է»: Յօդուածագիրը շարունակում է. «Սրբազանի ատենաբա-

նութիւնները շատ ազդու են լինում իրանց բովանդակած ճշմարտութիւններով» և բերում է բազմաթիւ օրինակներ:

1884 թուի նոյեմբերի 4-ին Սուրէնեանցի ղեկավարութեամբ Ս. Սարգիս եկեղեցում խուռն բազմութեան ներկայութեամբ կատարւում է հոգեհանգիստ հանգուցեալ Ներսէս Վարժապետեանի համար: Խօսում է մի փառաւոր ճառ, բացատրելով Ներսէսի նշանակութիւնը և թէ նրա մահով ազգը ինչ կորուստ է ունենում և առաջարկում է ժողովրդեան նրա յիշատակը յարգելու համար կամաւոր ստորագրութիւն բաց անել և ժողոված փողի տոկոսով մի քանի որդեգիր պահել հանգուցելոյ անունով և այդ առաջարկութիւնը մեծ ընդունելութիւն է գտնում:

Նրա ժողովրդասէր, խոհեմ և արդիւնաւէտ գործունէութեան համար Մշակ լրագիրը 1883 թ. № 198 մատնանշում է և Գէորգ եպիսկոպոսին ի թիւս այլոց իբրև կաթողիկոսական ապագայ արժանաւոր կանդիդատ, իբրև լաւ առաջնորդի և արթուն հովուի:

Նա իր գովանի և արդիւնաւէտ գործունէութեամբ գրաւել էր բարեմիտ երևանցիների իսկական սէրն ու յարգանքը և երախտագիտական զգացումն: Նրբ 1886 թ. լուր է տարածւում, որ Գէորգ սրբազանը թողնում է իր պաշտօնը՝ ժողովրդեան մեծ ցաւ է պատճառում: Նրանք մի խնդրագիր են ստորագրում և ներկայացնում Վեհին, որ չհեռացնէ Սուրէնեանցին իւր պաշտօնից: Ահա թէ ինչ էր գրւում նրա տեղափոխութեան մասին այն ժամանակ լրագրներում:

Նոր-Դար 1886 թ. № 107 «Նրեանից» քաղաքիս մէջ լուր է տարածուել, որ իբրև թէ մեր առաջնորդ Գէորգ Սրբազան Սուրէնեանցը թողնում է իւր պաշտօնը և հեռանում այստեղից: Այս մասին սրտնեղած է ժողովուրդը... Ժողովուրդը նրա հովութիւնից շատ գոհ է. Ս. Սուրէնեանցին ժողովուրդը սիրում է եւ երախտագիտական զգացմունքով կա-

պուած է նրա հետ. ժողովուրդը մի խնդրագիր է ստորագրում, որ Վեհ. Հայրապետը չթողնէ հեռանալու Ս. Սուրէնեանցին իւր այժմեան պաշտօնից»:

Մշակ 1886 թ. № 78. յուլիսի 15. «Այն լուրը, որ իբր թէ տեղիս առաջնորդ Ս. Սուրէնեանցը փոխւում է՝ մեծ տրտունջ է բարձրացրել ժողովրդի մէջ... և եթէ ճիշտ լինի ժողովուրդը վճռել է բողոքել այդ կարգադրութեան դէմ և խնդրել Վեհ. Կաթողիկոսից չփոխել Սրբազանին»:

Մշակ 1886 թ. № 104. սեպտեմբերի 16. «Երևանից. հաստատ աղբիւրներից իմացել եմ, որ ժողովուրդից յարգուած եւ նրա կատարեալ համակրովածինը վայելող Երևանի թեմի թեմակալ առաջնորդը գերապատիւ Գէորգ եպիսկոպոս Սուրէնեանցը օգոստոսի 25-ին հրաժարական է տուել տկարութեան պատճառով»:

Նոր-Պար 1886 թ. № 157. «Մեր թեմակալի փոխաւորը սրբազան Սուրէնեանցի իւր պաշտօնից հրաժարական տալու լուրը մեծ ցաւ պատճառեց քաղաքացիներին»:

Մշակ 1886 № 125. նոյեմբերի 6 «Լսում ենք, սր կաթողիկոսի հրամանով մեր առաջնորդը նշանակւում է Աստրախանի թեմը. պէտք է շնորհատրել Աստրախանցիներին Սուրէնեանցի նման արժանատի առաջնորդ ունենալու համար»:

1886 թ. դեկտեմբերի 4-ի Բարձրագոյն ուկազով Գէորգ եպիսկոպոս Սուրէնեանցը նշանակւում է Աստրախանի թեմի կաթողիկոս: Այդ լուրը մեծ ուրախութիւն է պատճառում Աստրախանցիներին, որովհետեւ թեմը պէտք ունէր Սուրէնեանցի նման մի ժիւր, եռանդոտ և ուսումնական առաջնորդի, որ կարողանար հոգեւորականների դասը լաւացնել, ուսումնարանները կարգ ու կանոնի գցել և ժողովրդի վրայ հեղինակաւոր ներգործութիւն ունենալ: Աստրախանի թեմը ամենաանշարժ և անմխիթար դրու-

թեան մէջն էր գտնւում և կարօտում էր մի եռանդոտ հովուի առաջնորդութեան:

Իսկ Սրբազանի Երևանից հեռանալը ամբողջ Երևանցիներին համակում է անսահման տրտմութեամբ: Մի սրտաշարժ և հանդիսաւոր տեսարան էր ներկայացնում Սրբազանի Երևանից մեկնելը:

Երևանից մեկնելուց մի քանի օր առաջ Նորին Սրբազանութեան առաջնորդարանում ներկայանում են թեմակալն դպրանոցի հոգաբարձուները, տեսուչն, ամբողջ ուսուցչական խումբը և աշակերտները թուով մօտ 200: Հոգաբարձութեան կողմից նրանցից մինը գրաւոր արտասանում է հետեւեալ ճառը, որը աւելորդ չեմ համարում յիշել այստեղ. «Այսօր Երևանայ հոգեւոր դպրանոցի հոգաբարձութիւնը, չենք դժուարանում ասել, դժբախտութիւն ունի վերջին անգամ ներկայանալ Ձերդ Սրբազնութեան, վերջին անգամ Ձերդ օրհնութիւնը ստանալ, Ձեր սուրբ աջը համբուրել և իւր «գնաք բարեւալ» ուղղել Ձեզ: Ներկայ հոգաբարձութիւնը իւր միամեայ գործունէութեան շրջանում և Ձեր օրով եղած նախորդ հոգաբարձութեանց գործունէութիւնը հաւասարապէս պարտական են Ձեր Սրբազնութեան շարունակ վեց տարուայ աշակերտը և խնայցի ղեկավարութեանը դպրանոցի օր աւուր յառաջագիւմութեան գործում: Ձեր մեկնութեամբ մեր դպրանոցն զրկուած կլինի իւր կարեկից և ցաւակից բարեկամից, իւր բարեխնամ և բազմահոգ հօրից: Այս խոստովանութեան մէջ կեղծիք չկայ, թող թերահաւատը միայն թերթէ Ձեր գործերը, որոնք կենդանի են և կը մնան միշտ յագեցնելու ցանկացողի իղձը: Թէ դուք սիրում էք ազգ ու դպրոց և նուիրել էք Ձեր անձն ամբողջովին այդ երկուսին հաւասարապէս նայելու, դորան երաշխաւորէ Ձեր այժմեան նոր և լայն ասպարէզը: Ճշմարիտ է, մեր դպրանոցն այլ ևս բաղդ չէ ունենալու գուցէ, վայելելու Ձեր խնամքն

ու. սէրը, սակայն նրա ցաւը մեղմանում է գէթ, մասամբ այսու, որ դուք դարձեալ բարեկամ և հոգատար էք հրաւիրւում ազգին և դպրոցի աւելի ընդարձակ իրաւանց սահմաններում: Դոքա երկուսը Ձեր սրտի վրայ ծանրացող առաջին և գլխաւոր հոգսերը լինելով, թող սնուին տակաւին Ձեզանով այստեղ, թէ այլ ասպարիզում: Եթէ պատմական հայ ազգի փայլուն ապագան դպրոցը միայն պիտի պսակէ, դուք, որ նուիրուած էք եղել միշտ նորան և կլինէք անշուշտ, այդ փայլուն ապագայի երախտաւորները շարքում հարկաւ պատուաւոր տեղ պիտի ունենաք: Մեզ հետ և շատերը կցանկանան, անտարակոյս, Ձերը սրբազնութեանը տեսնել նոյն սկզբունքներով աւելի վառուած ազգային բարձրագոյն ասպարիզի մէջ: Փշոտ և քարքարոտ է Ձեր ասպարիզի ճանապարհը, բայց Ձեր կոչումն ևս հէնց այն է, որ մաքրէք և հարթէք ի դիւրութիւն հօտի: Ուրիշը Ձեզ չի առաջնորդիլ և ոչ էլ Ձեր դառնութեանց արտասուքը սրբելու կփութայ, Ձեր օծեալ ճակատի վրայ դրոշմուած է. «հովիւ քաջ դանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց»: Գնացէք, սրբազան հայր, ինչպէս որ այսօր դպրանոցի ամբողջ կազմակերպութիւնը երախտագիտական խորին զգացմունքով կփութայ Ձեզ իւր գոհունակութիւնն և անկեղծ հաւաստիքը մատուցանել, բոլորովին վստահ եղէք նոյնպէս, որ այսօրն իսկ երաշխաւոր կլինի մեզ համար Ձեր սրբազնութեան անուան և գործոյ յիշատակին միշտ վառ, և հաւատարիմ մնալու: Թող ամենաբարի Աստուածը օրհնէ Ձեր ճանապարհը, Ձեր կեանքն և Ձեր գործը: Մենք ևս կփութանք շերմ մաղթելու և վերջին անգամ Ձեր սրբազան աշին համբուրիւ Ձեր օրհնութիւնը խնդրելու»: Այստեղ ամբողջութեամբ մէջ ենք բերում Սրբազան հօր մեկնութեան առթիւ Երևանցիների ի պատիւ նրա արտայայտած յարգանքի ցոյցերի նկարագրութիւնը Նոր-Դարի 1887 թ. № 92-ից:

Ահա ութ օր է, որ Սրբազան Սուրէնեանցը հրաման է ստացել վեհափառից երթալ Աստրախանի վիճակը: Երևանի ժողովրդի համար, ինչպէս որ ցաւալի էր իւր սիրելի Սուրենեանցի հրաժարուելու լուրը, և նոյնպէս յարգելի էր վեհ. Կաթողիկոսի տնօրինութիւնը և հաճութիւնը. ուստի խորհրդակցեց զանազան միջոցներով իբրև երախտագիտութեան նշան, մեծարել Սրբազան Սուրէնեանցին:

Վեց տարուայ ընթացքում սրբազան Սուրէնեանցը իւր ամեն տեսակ գովանի յատկութիւններով արժանացած էր ոչ թէ միայն հայերի մեծարանքին և համակրանքին, այլ և Երևանաբնակ Ռուս և Պարսիկ պատուաճանաչ մարդիկներին: Պէտք է բարեխղճաբար ասել, որ Սրբազան Սուրէնեանցը օրինապահութեամբ եւ եպիսկոպոսական ընթացքով մեծապէս փայլեցրեց եւ բարձրացրեց եպիսկոպոսական անունը ժողովրդի առաջ: Շաբաթ օրն էր, մայիսի 30-ին առաւօտեան ժամի 9-ին ներկայացան Սրբազանին օրհնութիւնը վայելելու թեմական դպրանոցի վարչութիւնը ուսուցիչներով և աշակերտներով և կոնսիստորի անդամները և ծառայողները առաջնորդարանի դահլիճում, կարդացուեցան ճառեր, որոնց իմաստը դպրանոցի և կոնսիստորի վարչութիւնների սրտերի զգացմանց երախտագիտական արտայայտութիւնն էր:

Չմոռացաւ Սրբազանը և այց ելնել մզկիթ քանի մի պատուելի մարդիկներով Պարսիկների գլխաւոր խազինին: Երբ Պազին լսում է սրբազանի գալուստը ընդ առաջում է և ամենամեծ սիրով ընդունում: Սրբազանը խօսեց 20 բոպէի չափ Հայերի և Պարսիկների պատմական և դրացի ազգ լինելու մասին և ցանկութիւն յայտնեց, որ միշտ սէր և խաղաղութիւն քարոզի ժողովրդի մէջ: Պազին էլ շարժուած Սրբազանի խօսքերից յայտնեց իր հաճութիւնը:

Հասաւ կիրակի օրը—մայիսի 31-ը. արդէն լուր էր

տարածուած թէ Սրբազան Սուրէնեանցը պէտք է տայ իւր հրաժեշտը Երեւանին: Տակաւին ժամը 8-ը չլրացած, ոստիկանական աստիճանաւորներէից, դիւանատան ծառայողներէից, վաճառականներ, և միւս բոլոր դասակարգերէից արհեստաւորներ, քաղաքի քահանաները և մերձակայ գիւղերէից շատ անձեր խմբուեցին առաջնորդարանի գաւիթը: Մի տեսակ ուրախութիւն և տխրութիւն նշմարուում էր ամենի երեսի վրայ:

Այդ միջոցին այցելութեան եկաւ նահանգապետը, երկար խօսակցելուց և բարեկամական հաւաստիքը յայտնելուց յետոյ հեռացաւ. այցելութեան եկաւ և Ռուսաց հոգեւորականների կողմից մի քահանայ, որ յուզուած խօսեց սրբազանի ցոյց տուած սիրոյ և յարգանքի մասին դէպի Ռուս հոգեւորականները: Յետոյ եկաւ Պարսիկների խազին—Երեւանի հոգեւորականների գլուխը: Երբ ժողովուրդը խմբուած էր և պատրաստ էր Սրբազանի կառքը, Սրբազանը դուրս եկաւ առաջնորդարանից շրջապատուած քահանաներով և աստիճանաւորներով: Ներկայ եղողներից հայր Վահանը մի ոգևորող բերանացի ճառ խօսեց, յայտնելով այսօրուայ Երեւանի քահանաների և ժողովրդեան տխրութեան պատճառը Սրբազանի հրաժարուելու պատճառով, և բացատրեց Սրբազանի վեց տարուայ ընթացքում ունեցած գործունէութիւնը, փոխանորդական պաշտօնավարութեան մէջ վեհ դիրք բռնելը, եպիսկոպոսական անուան փայլը, օրինակելի կարգապահութիւնը, եկեղեցական և դպրոցական հաշիւներին ուղղութիւն տալը և դառնալով դէպի Սրբազանը ասաց. «Սրբազան հայր, երբ դուք մուտք գործեցիք Երեւան, մենք բոլորս մեր ձայնը բարձրացրինք դէպի Աստուած թէ «օրհնեալ է Իսրայէլի Տէր Աստուածը, որ խեղճ եկաւ մեզ և ազատեց իւր ժողովրդին»: Իսկ այսօր ասում ենք. «օրհնեալ որ զնա յանուն Տեառն, թագաւորդ Իսրայէլի»։ հայր Վա-

հանի խօսքերը խոր տպաւորութիւն թողին բոլորի սրտին. փոքր ինչ առաջ գնալով, եկեղեցու դռան մօտ, մի երիտասարդ պ. Ա. Ազարեանց սուրբ Սիմէօն եկեղեցու դռարոցների վարչութեան և ժողովրդի կողմից կարգաց մի իմաստալից ճառ, որի խօսքերը շարժեցին զգայուն սրտերը: Սրանից յետոյ Սրբազանը մտաւ եկեղեցին, ուր այնքան լցուած էին, որ ասեղ գցելու տեղ չկար: Սեղանը համբուրելուց յետոյ դարձաւ դէպի ժողովուրդը մի իմաստալից քարոզով, որի մէջ իւր անձի օրինակը առաջ բերելով, քաջաբերում էր ժողովրդին խոհեմութեամբ գործել և չյուսահատուել անյաշոգութիւններից: Անուհետև օրհնեց ժողովրդին, բարեմաղթեց սէր և խաղաղութիւն: Օրհնելուց յետոյ, սրբազանը աղօթեց և ժողովրդի խումբ բազմութեամբ շրջապատուած դուրս եկաւ եկեղեցուց ճանապարհ ընկնելու:

Ամբոխը Սրբազանի աջը առնելով արգելում էր նրան կառքնստելու. վերջապէս խաչակնքելով ժողովրդին նըստեց կառք և գնաց: Կառքին հետեւեցին և բազմաթիւ փայէտօններ և ձիււորներ, որոնք Երեւանից Քանաքեռ տանող ամբողջ ճանապարհը բռնել էին, այնպէս որ անց ու դարձ անելը դժուարին էր: Քանաքեռում պատրաստ էր սեղան-ճաշ մի կանաչազարդ այգում... Եւ երբ բոլորեցին սեղանի չորս կողմը, Սրբազանը մի բաժակ առաջարկեց Վեհափառ Կաթողիկոսի և սուրբ Էջմիածնի հաստատութեան համար: Յետոյ առաջարկուեցաւ Սրբազան Սուրէնեանցի կենացը, կարգացուեցան ճառեր: Արդէն ժամի 3-ն էր և Սրբազանը պէտք է շարունակէր իւր ճանապարհը. նա ոտքի կանգնեց օրհնեց ազգի ամբողջութեան, Երեւանցոց և այն պարոններին, որոնք նեղութիւն կրեցին... Երբ նստեց սկսուեցաւ «էր հեռանաս» երգը. այս միջոցում ամենքը համբուրում էին Սրբազանի աջը և ինքը և ժողովուրդը յուզուած արցունքի կաթիլներ էին

թափում աչքերից: Երբ երգը վերջացաւ, կառքը շարունակեց իւր ճանապարհը: Քանաքեռից շրջապատեցին Սրբազանի կառքը Կոտէից գաւառից եկած քահանաները և ձիաւորները ժողովրդից մինչև հանգիստ առնելու տեղը:

Գէորգ Եպիսկոպոսը յունիսի 30-ին Աստրախան է հասնում և հանդիսաւոր ընդունելութիւն գտնում. Սրբազանը եկեղեցում դառնում է ժողովրդին համառօտ և ազդու խօսքերով. տալիս է ժողովրդին Վեհ. Հայրապետի առաքած օրհնութիւնը և ապա Երևանի հասարակութեան ողջոյնը հաղորդում. այնուհետև ի միջի այլոց ասում «իմ թե ու թիկունքը հոգեւոր և աշխարհական դասը պէտք է կազմի. երկու կողմից ևս ինձ հետ ունեցած մասնաւոր անհատների մտերմական յարաբերութիւնները իմ առտնին բարեկամութեան պէտք է վերադրել, իսկ հասարակական գործերում իմ սեփական հայեացքով կառաջնորդուեմ և չեմ կարօտի կողմնակի խորհուրդներ: Նրա խօսքերը խոր տպաւորութիւն են գործում խոնուած բազմութեան վրայ: (Մշակ 1887 թ. № 77):

Գէորգ Սրբազանը իւր գործունէութիւնը սկսեց գլխաւորապէս դպրոցներից: Տեղական ծխական դպրոցը աշակերտ չունենալով փակման վտանգի մէջ էր. ծխական քահանաների ներկայացրած ցուցակից երեաց, որ 8—12 տ. երեխաներից շատերը անժամանակ կրպակներում աշակերտ են, շատերը տիրացուների մօտ են ուսանում: Սրբազան հօր տնօրէնութեան շնորհիւ դպրոցը շուտով ունենում է 40-ից աւելի աշակերտ. (Նոր-Պար 1887 թ. № 143): Օրիորդական դպրոցին կից կառուցանում են երկհարկանի շինութիւն, որով ընդարձակում է դպրոցական շէնքը և երկդասեան դպրոցը փոխարկում է երեք դասեանի:

Իւր ուշադրութիւնը դարձնում է եկեղեցիների ներքին և արտաքին բարեգարգութեան վրայ: Քաղաքի եկե-

ղեցիները ներքուստ և արտաքուստ գեղեցիկ կերպով նորոգւում են: Եկեղեցական անկանոն երգեցողութիւնը կանոնաւորելու համար՝ Բագուից հրաւիրելով Կարամուրզային՝ քառաձայն ներգաշնակ երգեցողութիւն է մտցնում եկեղեցիների մէջ, իւրաքանչիւր եկեղեցու համար 40 հոգուց խումբ կազմելով: Նշանակում է առանձին խմբապետներ ռոճկով և որոշեալ պայմաններով:

Մինչև Գէորգ Եպիսկոպոսի Աստրախան գալը, արքունի միջնակարգ արական և իգական գիմնազիոններում և թէ՛ ըէալական դպրանոցում շաբաթական ընդամենն մի դաս էր նշանակուած կրօնից իւրաքանչիւր դպրանոցում և առարկան էլ պարտաւորեցուցիչ չէր: Գէորգ Սրբազանը գալուն պէս մեծ ուշադրութիւն է դարձնում այդ կարևոր առարկայի վրայ և թղթակցելով Ղազանի ուսումնական շրջանի հոգաբարձուի հետ, կարողանում է իրաւունք ստանալ, որ երկու սեռի գիմնազիոններում և ըէալական դպրանոցում շաբաթական լինի 12—15 դաս կրօնի և հայոց լեզուի և այն իբրև պարտադիր առարկայ: Առանձին կրօնուսոյց քահանաներ է նշանակում և ապահովում ռոճիկով: Իւրաքանչիւր տարի հարցաքննութեանց ինքը անձամբ ներկայ է լինում: (Նոր-Պար 1889 թ. № 41):

Դասաւանդութիւնը մշտապէս ապահովելու համար հանգանակում է 15,000 ռուբլի և յահուհ աւագ եկեղեցու դրամատան դնելով՝ նոցա տոկոսիքը յատկացնում է երեք կրօնուսոյցներին (Մշակ 1888 թ. № 18. Նոր-Պար 1891 թ. № 31):

Գէորգ Սրբազանը վարում էր միաժամանակ և Աստրախանի վիճակի հայ դպրոցների թեմական տեսչի պաշտօնը և արթուն հսկողութիւն ունէր դպրոցների ուսումնական մասի յառաջադիմութեան նկատմամբ. այցելում էր թէ՛ Աստրախանի և թէ՛ թեմի դպրոցներին, երկայն էր լինում դասերին և պակասութիւններ նկատած ժամանակ՝

ուղղում այդ թերութիւնները: (Նոր-Դար 1887 թ. № 183.

Թեմի եկեղեցիների գործակալների և երեսփոխաններին համար կանոններ է սահմանում, որ իւրաքանչիւրն իր իրաւանց սահմանը ճշտութեամբ ճանաչի և այդ կանոնները ս. Էջմիածնի տպարանում տպագրել տալով ցրւում է գործակալներին և երեսփոխաններին ի հրահանգութիւն:

Գէորգ եպիսկոպոսը հաստատեց «վարչութիւն օժանդակ գանձարանի ի նպաստ չքաւոր եկեղեցական պաշտօնէից» որոշ կանոնադրութեամբ, որ շուտով հարստանում է դրամական նուէրներով, գնում է խաղարկութեան տոմսեր և սկսում է զգալի օգնութիւն հասցնել չքաւոր հոգևորականներին մանաւանդ ստորին պաշտօնեաներին:

Գէորգ եպիսկոպոս իր բռնած դիրքով և հեղինակութեամբ և մանաւանդ դէպի ս. Էջմիածինը ցոյց տուած իր վառ սիրով՝ կարողանում է ս. Էջմիածնի նորոգութեան համար ժողովել Աստրախանի թեմում 12,000 ռ.:

Նկատելով վիճակային արդեանց նուազութիւնը և առաջնորդարանի կարօտութիւնը, Տէրութիւնից հող է խընդրում և 1889 թ. յունվարի 1-ից կալուածական նախարարութիւնից ստանում է 60 դեսետին վառելահող ի մշտնջենաւոր սեփականութիւն Աստրախանի հայոց Առաջնորդարանի, որի տիրապետական թղթերը և գետնի հաստատուած յատակագիծը յանձնում է կոնսիստորիային յանկորուստ պահպանութիւն (Նոր-Դար 1889 թ. № 16):

Գէորգ Սրբազանը եղել է ամեն տեղ հոգևորականութեան դրոշակը բարձր պահող. ամեն տեղ նա համակրութիւն է վայելել, ոչ թէ միայն ազգայիններից, այլ մինչև անգամ օտար ազգիներից, և այդ անձնական համակրութեան շնորհիւ շատ դժուար գործեր հեշտութեամբ էին վերջանում: Ահա մի օրինակ. — Գերեզմանատան ս. Յարութեան շքեղ եկեղեցին կառուցուած է Վօլգա գետի

ափին: Գետի հոսանքը հետզհետէ քանդելով եղերքը՝ վտանգ էր սպառնում եկեղեցուն և չնայելով կոնսիստորիայի քաղաքային վարչութեան հետ ունեցած բազմամեայ գրագրութեան, ոչ մի բաւարարութիւն չէր ստացւում: Սրբազան Սուրէնեանցը Աստրախան գնալուն պէս տեղեկանալով այդ մասին՝ քաղաքագլխի հետ բարեկամանալով, քաղաքային խորհրդին վճռել է տալիս գետեզր ամրացնելու համար 6500 ռուբլի, որով ս. Յարութեան եկեղեցին միանգամայն ազատում է սպառնացող վտանգից: (Նոր-Դար 1888 թ. № 63):

Աշխատում է նաև գեղեցկացնել գերեզմանատունը, այն է՝ ծառեր է տնկել տալիս և ուղիները կարգի բերում երեցփոխի օգնութեամբ: Իսկ այդ գործը աւելի կանոնաւորելու համար ծխականների ընդհանուր ժողով գումարելով և երկու անձն ընտրել տալով՝ երեցփոխանին օգնական է նշանակում:

Ազգային տօները ինչպէս միւս վիճակներում, այնպէս էլ այստեղ կատարում էր առանձին շքով և իր ներկայութեամբ, իր իմաստալից ճառերով զարթեցնում էր ժողովրդեան մէջ ազգային ինքնատակցութիւն և սէր դէպի այդ զիտակցութիւնն կոող և կոփող մայրենի դպրոցներ: (Նոր-Դար 1888 թ. № 63):

Քարոզում էր եկեղեցուց բեմից և յորդորում նրանց դէպի բարեգործութիւն, որ հայ ազգի բարի յատկանիշներին մէկն է և ի խրախոյս բարերարների և նուիրատուների և յօրինակ միւսների օրհնում էր նրանց: Ուշադրութիւն էր դարձնում և զաղութային մի այլ պակասութեան վրայ. շնորհիւ ապօրինի կենակցութեանց և ուշ ամուսնանալուն հայ ազգաբնակչութիւնը նուազում էր. յորդորում էր ժողովրդին, որ իրենց որդոց մեր նահապետական բուն ազգային սովորութեան համաձայն, շուտով առնուանացնեն, թոյլ չտան նրանց նիւթապէս,

բարոյապէս և ֆիզիքապէս քայքայուելու՝ ապօրինի կենսակցութեան մէջ մաշելով իրենց կեանքը: Սրբազան հօր անկեղծ, ժողովրդի սիրով տոգորուած և սրտառուչ խօսքերը մեծ տպաւորութիւն էր գործում ժողովրդի սրտի վերայ: Նա քարոզիչներ նշանակեց եկեղեցիներում և ինքը անձամբ մեծի պահոց կիւրակէ օրերը քարոզ էր խօսում ի մխիթարութեան ժողովրդեան ս. Գրիգոր Լուսաւորիչ և Աստուածածին եկեղեցիներում (Նոր-Պար 1889 թ. № 41):

Նրա քարոզները ինչպէս առաջ, նոյնպէս այժմ և ապա յետոյ միշտ ունեցել են իւր լաւ հետեւանքները, որովհետեւ նա բացի ս. գրքից, քարոզում էր և ժողովրդի ամեն տեսակ պէտքերի վրայ, կրօնասիրութեան, ազգասիրութեան, ուսումնասիրութեան, տնտեսութեան, ընտանեկան և հասարակական պակաս և լաւ կողմերի վրայ:

Հասարակական այլ ասպարէզներում ևս պակաս չէր Սրբազանի եռանդն ու գործունէութիւնը: Նա հիմնեց «Աստարխանի հայ կանանց խնամատար ընկերութիւնը» որոշ կանոնադրութեամբ հաստատուած Վեհափառ Կաթողիկոսից, որի նպատակն էր օգնել իգական սեռի կրթութեան գործին Աստարխանում: Այդ ընկերութիւնը գործում էր ամենայն եռանդով, հոգալով ազգային օրինորդական դպրոցի չքաւոր աշակերտուհեաց հանդերձը և ամեն պիտոյքը: Նա և նշանաւոր ընտանիքների տիկիները և օրիորդները շաբաթը մի անգամ ժողովուրդով օրիորդաց դպրոցում կար ու ձևով էին պարապում և չքաւոր երկսեռ սաների համար իրենց ձեռքով հանդերձ պատրաստում, շատ անգամ նիւթեղէնը իրենց սեփականութիւնից նուիրելով, բացի տարեկան տուրքից (Նոր-Պար 1891 թ. № 30):

Ահա թէ ինչ է գրուած. այդ մասին 1890 թ. № 205. Նոր-Պարում. «Աստարխանից անցեալ անգամ գրել էի, որ Աստարխանում ևս շուտով կազմուելու է «հայ կանանց

Բարեգործական ընկերութիւն. այժմ ուրախութեամբ պէտք է հաղորդեմ, որ գեկտեմբերի 9-ին, կիրակի օրը, սուրբ պատարագից յետոյ, տղայոց դպրոցի ընդարձակ դահլիճում կայացաւ ժողով Առաջնորդ Գէորգ Սուրենեանց եպիսկոպոսի հրաւիրանօք և նախագահութեամբ. ներկայ էին քաղաքիս հայ հասարակութեան նշանաւոր ընտանիքների ներկայացուցիչների մեծ մասը թէ տիկիներ և թէ օրիորդներ: Սրբազան նախագահը կարգաց կանոնադրութեան կարևոր յօդուածները մանրամասն մեկնելով և ժողովրդականները ծանօթանալով կանոնադրութեան հետ՝ միաձայն յայտնեցին իրենց շնորհակալութիւնն և յօժարութիւնը մի այդպիսի ընկերութիւն կազմելու համար:

Գեր. առաջնորդը ևս խոստացաւ կանոնադրութիւնը շուտով առաջարկելու հայրապետական հաստատութեան:

Տիկիները յայտնեցին նախագահին, որ մինչև կանոնադրութեան հաստատութիւնն իրենք ցանկանում են մի որոշ գումար ժողովել և չքաւոր աշակերտուհիների համար ձմեռան հագուստ պատրաստել և հաճութիւնն ստանալով, ստորագրեցին մօտ 200 ռուբլի և Սրբազան հայրը անմիջապէս յանձնեց հոգեւոր երկսեռ դպրոցների գանձապահ հոգաբարձու պ. Սողոմոնեանին, որ ներկայ էր նոյն ժողովում: Բացի դրանից, պատուելի և ուսումնասէր տիկիները խոստացան իւրաքանչիւր երեքշաբթի երեկոյեան ժողովուրդու. օրիորդական դպրոցում կարուձևով պարապելու, և խնդրեցին գանձապահին, որ իրեն յանձնուած երկու հարիւր ռուբլով հագուստեղէնի համար հարկաւոր կտորներ գնէ, որ գործը շարունակեն: Ամենայն բարի գործում մասնակցող պ. Փարեմուզեանցն ևս, ի սրտէ համակրելով այս ազնիւ գործին, խոստացաւ տղայոց դպրոցի չքաւոր աշակերտների հագուստի համար հայոց կրպակներից կտորներ ժողովելու ձրիաբար, և յար-

գելի տիկիներն և օրիորդներն նոյնպէս յանձն առան տղայոց հագուստներն ևս կարելու:

Այսպիսի մի բարի գործ կատարելով... ժողովրդականներն ընդունելով Սրբազան հօր օրհնութիւնը և գոհունակութիւնը, ուրախ տրամադրութեամբ ցրուեցան»: 1887 և 1888 յօգուտ հրկիզեալ Ձէյթունցոց Աստրախանի թեմում ժողովեց 4000 ռուբլի և ուղարկեց Կ. Պօլսի ազգային պատրիարքարանից կազմուած Կիւլպէնկեան մասնաժողովին: Ահա թէ Ձէյթունցիներին հասցրած օգնութեան համար ինչ է գրում Մշակը: «Այդ աչքի ընկնող հանգանակութիւնը պատիւ է բերում թէ տեղական առաջնորդ Սուրէնեանց եպիսկոպոսին և թէ Աստրախանցի համեմատաբար փոքրաթիւ հայերին, որոնք մասնակցել են այդ գործում նուիրելով 200-ից սկսած մինչև 1 ռ.» (1888 թ. № 9): Թիֆլիզի 1892 թ. Յունվարի 6-ին աղէտի զոհուողների ընտանեաց օգտին ժողովեց մօտ 200 ռուբլի:

1888 թուին սեպտեմբերի 20-ին առաւօտեան 10 ժամին Վլադիկավկազ քաղաքում Գէորգ Սրբազանը բաղդունեցաւ ներկայանալու իբրև Աստրախանի թեմի առաջնորդ Թագատուր Կայսեր Ալեքսանդր Ալեքսանդրովիչին, Թագուհի Կայսրուհի Մարիա Փէօդորովնային, Թագաժառանգ Մեծ Իշխան Նիկոլայ Ալեքսանդրովիչին և Մեծ Իշխան Գէորգի Ալեքսանդրովիչին և նոյն երեկոյեան ժամը 8-ին հրաւիրւած Բարձրագոյն սեղանի ճաշելու և երկու տեսակցութեանց ժամանակ ևս վայելեց Նոցին Կայսերական Մեծութեանց բարեհաճ ուշադրութիւնը:

Պակաս չի եղել Սրբազան հօր գործունէութիւնը և իւր խնամքին յանձնուած վիճակի այլ քաղաքների վերաբերութեամբ: Նա անձամբ այցելութեան է գնում իւր վիճակի այլ տեղերը և նրա ամեն մի այցելութիւնը ունենում էր արդիւնաւոր հետևանք այցելած տեղի համար:

1887 թ. Հոկտեմբերի 13-ին այցելում է Եկատերինադար. ժողովուրդը հանդիսաւոր կերպով ընդունում է և նոյն օրը երեկոյեան ժողով կազմում և Սրբազանի յորդորներով ժողովականները 600 ռուբլի են ստորագրում նոր կառուցանելիք դպրոցի շինութեան համար. հոկտեմբերի 14-ին այցելում է եկեղեցի, աչքի է անցնում մատենները, դարդերը, անօթեղէնը, այցելում է ծխական դպրոցին, ներկայ գտնւում 2—3 ժամ շարունակ դասերին և գտնելով անարդիւն՝ ասաց. «Աշխատեցէք, որ արդիւնաւոր լինի դպրոցը». այդ երեկոյեան նորից ժողով է կազմում, խօսում գլխաւորապէս կրթութեան գործի մասին, դարձեալ ստորագրում են 1000 ռուբլի. ամսի 15-ին առաւօտեան ներկայ լինում պատարագին և ազդու քաղոք խօսում: Յետոյ ուսումնարանի շինութեան տեղը գնում նայելու, որն և յարմար գտնում և նոյն օրը ժամը 2-ին գնում երկաթուղու կայարանը անհամար կառքերի ուղեկցութեամբ: Ռուստովից նրա համար տասն անձինք իրենց ծախքով բերել տուին գեղեցիկ զարդարուած վագօն և ճանապարհ գցեցին Նորին գերապատուութեան՝ որի խօսքերը կրթութեան գործի մասին և քաղցր յիշատակը անջնջելի և վառ մնացին: Ժողովարարութիւնը շարունակւում է և շուտով Եկատերինադարցիք ունենում են մի փառաւոր և հոյակապ տուն երկսեռ դպրոցների համար, որ պատիւ է բերում տեղական Հայ հասարակութեան (Նոր-Դար 1887 թ. № 183): Այցելում է Ղզլարին և ցաւով իմանում, որ քաղաքային դպրոցում կրօնի և հայոց լեզուի դասատուութիւնը ընդհատուած է միջոցների պակասութեան պատճառով. անմիջապէս Սրբազանը հաղորդադրութեամբ դիմում է քաղաքապետի պաշտօնակատարին և խնդրում, որ կրօնի և հայոց լեզուի ուսուցչի համար քաղաքային գումարից գէթ 200 ռուբլի թոշակ նշանակել յիշեալ նպատակով. (Նոր-Դար 1888 թ. № 53):

1889 թ. այցելում է Գէորգեակ քաղաքը, ուր շքեղ ընդունելութիւն է գտնում. գննում է եկեղեցու դրամական հաշիւները, երեցփոխին հաշտեցնում է աւագ քահանայի հետ, իսկ երեկոյեան ժամը 7-ին ընդհանուր ծխականների ժողով է կազմում. նկատելով մատաղ սերնդի մայրենի լեզուի գիտութիւնից զուրկ լինելը՝ յորդորում է ժողովրդեան օրիորդական դպրոց բանալ, որպէս զի գոնէ ապագայում հայախօս մայրեր ունենան և մայրենի լեզուն տարածեն: Ծխականները լսելով Սրբազան հօր սրտառուչ, ազդու և օգտաւէտ խրատները միաձայն հաւանութեամբ վճռում են բանալ օրիորդական դպրոց. կատարում է յաջող հոգաբարձական ընտրութիւն: Հասարակութիւնը խոստանում է իւրաքանչիւր տարի վճառել 400 ռուբլի, իսկ Սրբազանն էլ եկեղեցական արդիւնքից դպրոցի պահպանութեան համար յատկացնում է տարեկան 300 ռուբլի: Նոր-Դար 1889 թ. № 184:

Յօդուածագիրն ասում է. այսպիսի մի անմահ յիշատակ թողնելով Գէորգեակ քաղաքում մեր պատկառելի և քաղցրաբարոյ Սրբազան թեմակալ առաջնորդը, հոկտեմբերի 3-ին երեկոյեան ժամը 5-ին մեկնեցաւ դէպի Աստրախան տանելով իւր հետ մեր որդիական անկեղծ համակրութիւնը:

Գէորգ Սրբազանի տնօրէնութեամբ բացուեցաւ Պետաթիգորսկ քաղաքի երկսեռ հոգևոր դպրոցները, Պետրովսկ քաղաքի տղայոց դպրոցը. շինուեց Պետաթիգորսկի երկյարկանի տունը, որի շինութեան առաջին հիմնաքարը դրաւ Խաչատուր Թումանեանցը, որ նուիրեց 3000 ռուբլի և Գէորգ Սրբազանի հրամանով նոյն դպրոցական շինութեան համար ուսումնասէր Ղլարցիներէ ժողովեցին 500 ռուբ. նոյնպէս շինեցին Պետրովսկու դպրոցը, տեղական հայազգիները սակաւաթիւ լինելով և գժուարանալով շինութեան ամբողջ ծախսը հոգալ՝ Գէորգ Սրբազանը իւր վի-

ճակից ժողովեց 700 ռուբլի և ուղարկելով դպրոցական հոգաբարձութեան՝ շինութիւնը վերջացրին և սկսուեց կանոնաւոր ուսում: Նորին Սրբազնութեան յորդորմամբ Ստաւրապօլաբնակ միլիօնատէր Մարգար աղա Պապովեանցը նուիրեց տեղական երկսեռ ազգային հոգևոր դպրոցներին 20000 ռուբլի, որի 1200 ռուբլի տոկոսով մշտապէս ապահովեց նրանց գոյութիւնը:

Աստրախանի ամբողջ թեմը չունէր թեմական հոգևոր դպրանոց (Սեմինարիա): Թեմի նախկին սեմինարիան Մատթէոս Արքեպիսկոպոսի անհմուտ կառավարութեան շնորհիւ և իր նպատակին չծառայելու պատճառով 1864 թ. փակուում է և Աստրախանի թեմը զրկւում է մի այդպիսի կարևոր հաստատութիւնից, որ մեծ զարկ կարող էր տալ ազգային ինքնաձանաչութեան և մայրենի լեզուի տարածման գործին:

Գէորգ սրբազանը քաջ հասկանալով այդպիսի դպրանոցի կարևորութիւնը՝ 1889 թ. նորից արծարծում է Սեմինարիայի բացելու հարցը: Հինգ հոգուց բաղկացած մի յանձնաժողով է ընտրւում՝ որոշելու ապագայ սեմինարիայի ծախսը և աղբիւրները: Յանձնաժողովը եռանդով կատարում է իրեն յանձնած գործը և գրաւոր ներկայացնում Սրբազանին, որ Մակար կաթողիկոսից թոյլտուութիւն է ստանում բանալու նոյն ծրագրով, ինչ ծրագիր ունէին միւս թեմական դպրոցները. (Արձ. 1894 թ. № 40): Բայց շուտով էջմիածնի ս. Սինօդի 1890 թ. մարտի 14 № 903 հրամանն է ստանում, որի մէջ գրուած էր. «յաւելելով ի գիտութիւն Ձեր, թէ մինչև ցհաստատութիւն առաջարկեալ ի նորին սրբութենէ ծրագրոյ թեմական դպրոցաց հայոց անմարթէ բանալ թեմիդ զՍեմինարիայ: Եւ այդպիսով արդէն իրագործութեան մօտ Սեմինարիայի բացման խնդիրը ֆնում է անկատար ի ցաւ Գէորգ Սրբազանի: (Արձագանք 1894 թ. № 41):

Եւ այսպէս իւր եռանդուն գործունէութեան բարի հռչակը թողնելով Աստրախանի թեմում՝ Գէորգ սրբազանը, 1894-ի փետրուարի 3-ին, Տ.-Մկրտիչ Կաթողիկոսի առաջարկութեամբ, Բարձրագոյն բարեհաճութեամբ հաստատուում է Թիֆլիզի ընդարձակ թեմի առաջնորդ։

Թիֆլիզի պէս մեծածաւալ թեմի վարչական գործերը հմուտ ղեկավարի էր սպասում։ Խելացի առաջնորդի խնամքին էին սպասում զպրօցները, եկեղեցիները, ուխտատեղիները և նրանց բազմատեսակ կարիքներն ու հոգսերը։ Գէորգ Սրբազանի առաջնորդութեամբ նոր յոյսեր են ծագում ամենի մէջ և նա ինչպէս իւր վարած ամեն պաշտօնավայրերում, այնպէս էլ Թիֆլիզի թեմում իւր ուշադրութիւնը կենդրոնացնում է թեմի եկեղեցիների նորոգութեան և վերաշինութեան, եկեղեցականների վիճակի բարելաւութեան, դպրոցների բարւոք կառավարութեան և հասարակական բարիքների վրայ։

Որովհետեւ ժողովրդեան բարի օրինակ տուողները և նրանց քրիստոնէական սիրով և հոգով դաստիարակողները հոգևորականներն են ներկայանում, որոնք իրենց պարտաճանաչութեամբ և եռանդով մեծ զարկ տալ կարող են ժողորդի և եկեղեցու յառաջադիմութեան և շինութեան՝ Գէորգ Սրբազանը առաջնորդութիւնն ստանձնելուն պէս մի շրջաբերականով դիմում է իւր ստորադրեալ հոգևորականներին, հրաւիրելով նրանց յուղղութիւն և ի կարգ և տալով նրանց կարևորագոյն խրատներ։ Այսպէս զգուշացնում է նրան դատարկապօրտութիւնից, անճշտութիւնից և անփութութիւնից, անկարգապահութիւնից, եկեղեցու արդիւնքներին նախանձախնդիր չլինելուց, հովութեան պարտքը մոռանալուց, ընչասիրութիւնից. սորա հետ պատուիրում է հոգ տանել ծխի և նրա անտէրունչ անդամների, եկեղեցու բարեգարգութեան, եկեղեցու արդիւնքի, հոգեշահ կտակների, մանկանց կրօնական դաստի-

արակութեան, եկեղեցական երգեցողութեան և քարոզչութեան մասին։ Սորանով կամենում էր, որ հոգևորականները ըմբռնէին իրենց վեհ կոչումը և ունեցած դերը և ըստ այնմ գործէին։ (Արձագանք 1894 թ. № 30 Նորիար 1894 թ. № 37)։

Տ. Մկրտիչ Կաթողիկոսի կողմից ս.-Պետերբուրգում 1894 թ. Նոյեմբերի 8-ին ներկայացաւ ի Տէր հանգուցեալ Աղէքսանդր Գ. Կայսեր թաղմանը և նոյն ամսի 14-ին բաղդ ունեցաւ ձմեռային պալատի մեծ եկեղեցում, ըստ հրաւիրանաց պալատական նախարարութեան՝ ներկայ լինելու թագաւոր Կայսեր Նիկոլայ Բ-ի և Ալէքսանդրա Ֆէոդորովնայի պսակադրութեան մեծ հանդիսին և նոյն ամսի 18-ին մատոյց Վեհափառ Հայրապետի կողմից Նորին Կայսերական Մեծութեանց գահակալութեան առթիւ բարեմաղթութիւններ։

Ազգիս հայրապետը յանձնարարել էր նորան նորապսակ Կայսեր գթութիւնն ու կարեկցութիւնը հայցել թիւրքիոյ հայերի անտանելի վիճակի համար. Սրբազանը Նոյեմբերի 24-ի գրութեամբ դիմելով արտաքին գործերի նախարարին՝ յայտնում է, որ Վեհափառ Հայրապետը ինչպէս հոգևոր գլուխ հայոց, ջերմապէս աղաչում է Նորին Կայսերական Մեծութեան նշանաւորել իւր թագաւորութեան սկիզբը թիւրքիոյ հալածուած հայերի պաշտպանութեամբ և ըստ օրինակի իւր Օգոստափառ նախորդների, վախճան դնել տաճիկների բռնութեանց քրիստոնեաների վրայ։

Տ. Մկրտիչ Կաթողիկոսը գոհ Գէորգ սրբազանի թէ պաշտօնավարութիւնից և թէ յանձնարարութիւնները արժանավայել կերպով կատարելուց՝ 1895 թ. Յունուարի 14-ին կոնգակով շնորհում է նրան արքեպիսկոպոսութեան պատիւ։

Հէնց առաջին տարին պատուիրեց Կոնսիստորիային,

որ աշխատէ հոգալ եկեղեցիներ կառուցանել, ուր չկան և ընտրել քահանայացուներ, ուր ժողովուրդը զուրկ է նոցանից և հոգևոր մխիթարութիւնից:

Գործը սկսւում է առաջնորդանիստ Վանաց աւագ եկեղեցուց: Վանաց աւագ եկեղեցին իր անշուք դրութեամբ պատիւ չէր բերում Տփլիսի պէս առաջնակարգ քաղաքի հայութեան: Կովկասի մայրաքաղաքում հայերը չունէին իրենց անուան արժանի եկեղեցի, որ օտարազգի այցելուներին առաջ ամօթով չմնային. և ահա Գէորգ Սրբազանի անդրանիկ հոգսերիցն է լինում կամ շինել բոլորովին նոր մի շքեղ եկեղեցի, կամ Վանաց եկեղեցին նորոգել տալով՝ վերածել վայելուչ դրութեան: Այդ մասին թէպէտ մտածել էին նախկին առաջնորդները, բայց նոցա չէր յաջողուել:

Գէորգ Սրբազանը իրեն յատուկ եռանդով և հետամտութեամբ ձեռնարկում է այդ գործը: 1894 թ. Ապրիլի 1-ին ժողովի է հրաւիրում քաղաքի հասարակութեան բազմաթիւ ներկայացուցիչների Վանաց աւագ եկեղեցու շինութեան համար խորհրդակցելու: Սրբազանը բացատրում է եկեղեցու խիստ աննախանձելի դրութիւնը և կարօտութիւնը հիմնական նորոգութեան, կամ ի նորոյ շինուելուն. առաջարկում է մտածել այդ մասին և գործն սկսել անմիջապէս: Ժողովը սկզբունքով ընդունում է ոչ թէ նորոգել, այլ նորը կառուցանել և ընտրում է երկու յանձնաժողով, որ երկու ամսուայ ընթացքում պատրաստեն թէ տնտեսական մասի և թէ շինութեան ճարտարապետութեան վերաբերեալ տեղեկագիրներ, նոյնպիսի տեղեկագիրներ պատրաստել նաև նորոգութեան վերաբերեալ:

Կազմուած մասնաժողովները Սրբազան հօր եռանդուն աջակցութեամբ ձեռնարկում են գործի և Յունիսի 10-ին կայանում է երկրորդ ժողովը: Մասնաժողովի զեկուցումից

երևում է, որ եկեղեցու նոր շինութեան համար հարկաւոր է 300000 ռուբլի. իսկ եկեղեցու արտաքին նորոգութեան համար 25000 ռ.: Որոշւում է, ժողովրդի հոգեկան մխիթարութիւնից չզրկելու համար՝ միայն եկեղեցին նորոգել. հարկաւոր միջոցները հոգալու համար ընտրում են 7 հոգուց բաղկացած նոր մասնաժողով: Շուտով սկսւում է եկեղեցու արտաքին վերանորոգութիւնը հայկական ճարտարապետութեան ոճով: Նիւթական հարկաւոր միջոցները հոգալու համար մասնաժողովի աջակցութեամբ Գէորգ Սրբազանը հրաւիրում էր իւր մօտ առաջաւոր անձանց և յորդորելով ու համոզելով նրանց՝ կարողանում է հանգանակել մի խոշոր գումար՝ 25000 ռ.: (Արձագանք 1897 թ. № 42):

Արտաքին նորոգութիւնը ամենայն շքեղութեամբ փայլուն կերպով վերջացնելուց յետոյ՝ ձեռնարկում է եկեղեցու ներքին նորոգութեան, որի համար կարևոր էր համաձայն սկզբնական նախահաշուի 24000 ռ.: Սրբազան հօր շնորհիւ մեծագործ Ա. Մանթաշեանցը, որ չնայած արտաքին նորոգութեան մասնակցել էր խոշոր նուիրաբերութեամբ՝ սիրայօժար կերպով յանձն է առնում և եկեղեցու ներքին նորոգութեան ամբողջ ծախսը: (Մշակ 1900 թ. № 27):

Վանաց գաւիթը ընդարձակելու և կանոնաւորելու համար անհրաժեշտ էր Վանքին կից գտնուող Քոշք անուանուած կալուածքը գնել և կցել գաւթին: Յորդորում է Ա. Մանթաշեանին, որ սիրով կատարում է Սրբազանի ցանկութիւնը. գնում է կալուածքը և նուիրում եկեղեցուն: (Արձագանք 1897 թ. № 42):

Ազգային բարերար հանգուցեալ Ա. Մանթաշեանը և իւր կինը իրենց մեծագործութեանց համար, իբրև երախտագիտութեան նշան, թաղուեցան այդ տեղում:

Այդպիսով այսօր Վանաց աւագ եկեղեցին իր վայե-

լուչ և շքեղ դրութեամբ պարտական է Գէորգ Սրբազանի անդուլ ջանքերին և աշխատութեան և հանգուցեալ Ա. Մանթաշեանի մեծագործութեան:

Քաղաքի Ս. Լուսաւորիչ եկեղեցու շինութիւնը, որ գտնուում է յայտնի փողոցի վրայ՝ երեսուն տարուց աւելի էր, ինչ սկսուած էր, բայց մնացել էր կիսաշէն և իւր հողածածկ տանիքով գիւղական մի անշուք եկեղեցու տպաւորութիւնն էր թողնում: Սրբազանը անձամբ այցելելով և տեսնելով եկեղեցու աննախանձելի դրութիւնը՝ հրաւիրում է իւր մօտ Բարսեղ Բարխուդարեանին, որ մի քանի տարի առաջ խոստացել էր այդ եկեղեցին շինել: Յորդորում է նրան, ընդ փոյթ պատրաստել է տալիս եկեղեցու շինութեան մակարդակը և սկսում կիսաւեր եկեղեցու շինութիւնը: Շուտով մի ուրիշ պարոն ևս ներկայանում է սրբազան հօր և առաջարկում իրեն աջակցութիւնը եկեղեցու շինութեան գործում: Եւ ահա այսօր Կաթէթեան փողոցի վրայ կանգնած է մի գողտրիկ եկեղեցի ի մխիթարութիւն թաղային ժողովրդեան: (Արձագանք 1894 թ. թ. № 45):

Այցելում է և միւս եկեղեցիները: Գէորգ Սրբազանը նկատելով, որ Տփլիսի պէս հայաշատ և հարուստ քաղաքի եկեղեցիները վերին աստիճանի անշուք և նորոգութեան կարօտ դրութեան մէջ են՝ յորդորում է բարեպաշտ ծխականներին՝ է որ անձամբ, է որ ծխական քահանաների միջոցով և շուտով Թիֆլիզի եկեղեցիների մեծագոյն մասը հիմնովին նորոգուում են և պայծառանում բարեպաշտ ծխականների առատ նուէրներով և կամ եկեղեցիների սեպհական միջոցով:

Այսպէս Թիֆլիզի Նորաշէն եկեղեցին, Սարգիս աւ. քահանայ Շիօյեանցի յորդորով եղ. Կարապետ և Բէգլար Վարդանեանցները հիմնովին նորոգում են, ծախսելով 4000 ռուբլի. այդ եկեղեցու ներսի նորոգութեան մաս-

նակցում են Թամամշեանցները և Գ. Փրիդոնեանցը իրենց առատ նուէրներով, և եկեղեցին անշուք վիճակից վերածում փառահեղ դրութեան: (Արձագանք 1895 թ. № 98):

Ս. Նշան եկեղեցին տ. Նատալիա Էնակոլոփեանցի առատածնուն նուէրով (1150 ռ.) և եկեղեցու միջոցներով նորոգուում է ներքուստ. (Նոր-Պար 1894 թ. № 95):

Այցելելով ս. Կարապետ եկեղեցին՝ գտնում է աննախանձելի դրութեան մէջ: Հրամայում է եկեղեցու արեւմտեան կողմը գտնուած փայտեայ շինութիւնը վերցնել, քննել 5 տարուայ հաշիւները և նորոգել եկեղեցին. Սրբազանի հրամանը կատարւում է: (Արձագանք 1894 թ. մի 42):

Նորոգում է և Աւետեաց եկեղեցին, այդ նպատակով օր. Կատարինէ Տէր-Սաչատրեանցը նուիրում է 2400 ռ.: Նորին Բարձր Սրբազնութեան հոգածութեամբ և յորդորներով պ. Գրիգոր Բայեանդուրեանը կառուցանում է Շահնաբաթ ուխտատեղում կրկնայարկ ընդարձակ շինութիւն ուխտաւորների համար: Վերջապէս որոշ չափով նորոգւում են քաղաքիս գրեթէ բոլոր հայ եկեղեցիները և շինւում նրանց հիւսիսային կամ հարաւային կողմերից գաւիթներ ըստ հնագոյն ծիսի հայ եկեղեցու:

Բաթումի հայոց եկեղեցին ութ տարի առաջ հիմնարկուած լինելով և 2 արշին էլ պատերը բարձրացած՝ մնացել էր կիսակատար: 1895 թ. փետրվարին Վեհափառ Հայրապետի հետ Բաթում գնալով՝ Գէորգ արքեպիսկոպոսը քարոզ է խօսում եկեղեցու և յորդոր կարգում բարեպաշտ հայերին ջանադիր լինել եկեղեցու շէնքի թերին լրացնելու: Յետոյ ժողով է կայացնում, ուր ներկայ են լինում 41 պատուաւոր քաղաքացիներ: Սրբազանը կարճ ատենաբանութեամբ բանալով ժողովը՝ յայտնում է, որ ամօթ է Բաթումի պէս վաճառաշահ քաղաքի Հայ բնակիչների համար պատշաճաւոր եկեղեցի չունենալով՝

բաւականանալ մի անշուք սենեակով: Առաջարկում է ընտրել հոգաբարձուներ, որոնց Սրբազանն օրհնելով՝ յորդորում է շուտ ձեռնամուխ լինելով գործի և ժողովրդի յոյսը արդարացնել: (Արձագանք 1897 թ. № 19): Այդ եկեղեցու շինութեան համար մայրաքաղաքի հայ եկեղեցիների իշխան հոգաբարձուն նուիրում է 1000 ռուբլի: Եկեղեցին շուտով շինւում է և Գէորգ Սրբազանը շքեղ հանդիսով օծում:

Գէորգ Արքեպիսկոպոսի ժամանակ շինւում և նորոգւում են բազմաթիւ հայ եկեղեցիներ թեմի գիւղերում և քաղաքներում. ինչպէս՝ Վերին-Սանդակ, Մէտէխ, Դիլիշան, Մեծ-Պամաճ, Նորաշէն, Բօգ, Նորաշէն-Սաչկապ, Գեառգեառ, Անուխայ, Դրդի, Զինարի, Տիբասան, Գրակալ, Ներքին-Սանդակ, Ղանդառուր, Դիրբ, Վարդաբլուր, Այգեհատ, Արդուի, Մարց, Քրդեան, Կողբ, Դոշոթան, Բանանց, Մանգլիս, Կօղա, Դօստլու, Ոսկեպառ, Ներքին-Ճամբարակ, Արակովա, Կաճոյ, Մուկուզան, Խօխմել, Կոշոր, Ձորագիւղ, Լալի, Թաղայ, Աշխալայ, Խօյթայ, Կումիս, Ջալալօղլի, Մանաւ, Լճկաձոր, Կօթի, Քարվանսարայ, Մեծ Գարեջուար, Իխտիլէ, Ախալգաբայ, Չալուր, Սև-Քար, Ներքին-Քարհատ, Տղվիաւ, Մցխէթ, Նորիոյ, Մարտղոր, Ախալսոփէլ, Դլդան, Վաղայ, Դօստլու, Բանանց, Բաղանիս, Ախալքալակ, Այգեհատ, Աքորի, Դվեղ (ուխտատեղի), Վերին Աղդան գիւղերի, Ախալքալակ, Քուլթայիս և Դուշէթ քաղաքներին, ինչպէս նաև Գանձակ ս. Լուսաւորիչ և ս. Յովհաննէս և Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցիների նորոգութիւնները:

Այս բոլոր նորոգութիւնների և շինութիւնների վրայ ծախսուել է մօտ 100,000 ռուբլի:

Շատ եկեղեցիներ մինչև 1894 թ. չունէին երեցփոխներ. Գէորգ Սրբազանի առաջարկութեամբ ընտրւում

են այդպիսիք, որոնց համար հրատարակում է կանոններ ի հրահանգութիւն:

Կարգում է գործակալական և երեսփոխանական մի հաշւատես յանձնաժողով, եկեղեցիների աննախանձելի դրութեան մասին հոգացողութիւն ունենալու նպատակով, որ քննեն ամբողջ թեմի գործակալների և երեցփոխների հաշիւներն և զեղծումներ ու անհաւատարմութիւն նկատած դէպքում յայտնեն թեմական իշխանութեան ի տնօրէնութիւն: (Նոր-Դար 1894 թ. № 43):

Գէորգ Արքեպիսկոպոսի գործունէութիւնը, դպրոցական ասպարիզում ընդարձակւում է այդ թեմի դպրոցների բազմութեան չափով. թէպէտ այդ դպրոցները ունեցել են թեմական տեսուչ, սակայն գլխաւոր ամեն տեսակ կարգադրութեանց եղել է թեմակալ Առաջնորդը, իսկ թեմական տեսուչն իսկապէս եղել է միայն որպէս գործադիր մարմին: Այդ դպրոցներն աճում են Նորին Սրբաշնութեան գործունէութեան չափով:

Դպրոցների մասին ընդհանրապէս պէտք է ասել, որ դժբա կառավարուել են եռանդով, ունեցել են մշտապէս կանոնաւոր հոգաբարձուներ ժողովրդի ընտրութեամբ, որոշուած հաշիւներով, ապահովուած ու երաշխաւորուած եկամուտներով, հայրապետական ցուցակով ընտրուած ուսուցիչներով և վարժուհիներով:

Առաջնորդի յորդորներով բացւում են հետզհետէ նորանոր դպրոցներ, որոնցից յիշենք այստեղ Չաքաթալի օրիորդական դպրոցը, Դիզիլքիլիսայի և Նարդիւանի կենդրոնական ուսումնարանները, Շամշուղայի, Դուշէթի, Մուղղուտի, Ալի, Վաղայի, Վերին Չամբարակի, Վերին-Աղդամի, Բօնիս-Սաչէնի, Բօրժոմի, Կարգախի, Սովտայի, Տատէշի, Ելենենդորֆի, Ճանճղայի, Սանդօյի, Գետաբեկի, Կողբի, Սղնախի, Ախալքալաքի դպրոցները: Միւս կողմից պատւիրում է թեմական տեսչին, ջանալ բաց անել ու-

սոսնարաններ թիֆլիսի գաւառում, Շուլաւէրի, Լոռու և Ղազարի գիւղերում: Այդ դպրոցների կառավարութեան համար տրուեցան Տեսչին նաև առանձին հրահանգներ:

Բարձրագոյն կարգադրութեամբ հայ դպրոցները փակուեցան: Ամենամեծ հարուածը թիֆլիզի բազմահայ թեմին էր վերաբերում և ամենամեծ պատասխանատուութիւնը նորա Առաջնորդի վրայ ծանրանում: Գէորգ Արքեպիսկոպոսի բռնած դիրքը այդ ժամանակում մեզ ցոյց կըտայ, թէ որքան ցաւ էր պատճառում նրան այդ աղէտը:

Ամենից առաջ, որովհետև դպրոցները փակուեցան, համարուելով ոչ եկեղեցական արդիւնքներով պահուող՝ Գէորգ Սրբազանը պատուիրում է թեմական տեսչին, այցելել վիճակները և նոր դպրոցներ բանալ ուսումնածարաւ հայ մանուկների դաստիարակութեան համար, զուտ եկեղեցական գումարներով:

Առաջարկում է Վեհափառ Հայրապետին, դպրոցների համար եկեղեցական արդիւնքներից նախահաշիւ կազմելու ժամանակ ի նկատի ունենալ, որ միանգամայն որոշած գումարը եկեղեցին պարտաւոր է մշտապէս վճարել, ուստի խնդրում է տալիք գումարները ըստ այնմ կարգադրել:

Բօրչալուի գաւառապետի պահանջին, թէ հայ եկեղեցական շինութիւնը տուէք նորաբաց ուսումնարանի համար՝ պատասխանում է, որովհետև հոգևոր և մարմնաւոր իշխանութիւնների մէջ դատը դեռ չի վերջացել՝ չի կարող թոյլ տալ այդ, թէկուզ ժամանակաւոր կերպով:

Դիմում է ուսումնական շրջանի հոգաբարձուին, որ սորա ստորագրեալ իշխանութիւնները փոխանակ Բարձրագոյն կարգադրութեան համեմատ ուսումնարանապատկան կալածներ զրաւելու՝ զրաւել են նաև եկեղեցական բազմաթիւ կալուածներ, օրինակ՝ Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցու մեծագին կալուածքը և խնդրում է վերադարձնել այդպիսիները: Յիշեալ կալուածքը վերադարձնելու

համար դատարանական կարգով գործ է սկսում: Եւ շահում նոր օրէնքով նորաբաց դպրոցներում հայ կրօնուսույցներ պիտի նշանակուէին թեմակալ Առաջնորդի հաւանութեամբ: Տ. Գէորգ Արքեպիսկոպոսը տեսնելով, որ այդ օրէնքը չի գործադրւում, քանիցս բողոքելով՝ վերականգնում է օրէնքի գործադրութիւնը և այնուհետև կրօնուսույցները նշանակում են միշտ իւր համաձայնութեամբ: Այդպիսով դպրոցները ազատուեցան շատ տգէտ կրօնուսույցներից և նշանակուեցան դպրոցաւարտ քահանաներ, որոց և պատուիրեց նորաբաց ուսումնարանի աշակերտներին եկեղեցական տօներին եկեղեցի տանել, պարտաւորեցնելով նաև ուսումնարանական վարչութեան կատարել այդ եկեղեցական պահանջը:

Պակաս չէ Գէորգ Սրբազանի աշխատութիւնը նաև Յովնանեան օրիորդական դպրոցի վերաբացման գործում:

Նա միջնորդում է 1897 թ. Վեհին դպրոցի շահերը և կտակի տրամադրութիւնը պաշտպանել, որ և ընդունւում է կոնդակով:

Ներկայանալով Տ. Կառավարչապետին և բացատրելով այդ դպրոցի բացման Բարձրագոյն հրամանը՝ խնդրում է թոյլտուութիւն բացառիկ պայմաններով, այն է՝ հայ օրիորդներով, ուսուցիչ ուսուցչուհիներով, 8 ամեայ դասընթացքով և հոգաբարձական ծխական կազմակերպութեամբ: Կազմում է մի մշակուած ծրագիր և ներկայացնում Վեհին ի բարենկատողութիւն, որ և հաստատութիւն գտնելով՝ առաջարկում է այդ կանոնադրութիւնը նախարարութեան: Նախարարութիւնից հաստատութիւն գտնելով 1900 թ. յունվարի 5-ին կատարւում է հոգաբարձական ընտրութիւն և բացւում դպրոցը:

Գէորգ արքեպիսկոպոսը մեծ ուշադրութիւն է դարձնում պետական դպրոցների կրօնի դասաւանդութեան: Կազմել է տալիս հայ կրօնի ծրագիր, թեմի կրօնուսույց-

ների ցուցակ և առաջարկում դպրոցական վարչութեան։ Ուր հայ կրօն չէր աւանդուում՝ բազմաթիւ դիմումներով հաստատել է տալիս կրօնի դասեր և նշանակում կրօնուսոյցներ։ Խնդրում է Վեհափառ Հայրապետին դիմել Բարձրագոյն իշխանութեան թոյլտուութիւն ստանալու, որ արքունի տարրական դպրոցներում, ուր այն ժամանակ ստիպում էին կրօնը աւանդել ռուսերէն լեզուով՝ աւանդուի հայ լեզուով։

Ինքն անձամբ վերահաս է լինում կրօնի դասաւանդութեան կանոնաւորութեան՝ շարունակ ներկայ գտնուելով միջնակարգ պետական դպրոցների կրօնի քննութիւններին։

Հասարակական աղէտների ժամանակ նա միշտ եռանդուն մասնակցութիւն է ցոյց տուել։ 1894 թուից մի դառն և աղէտաբեր շրջան է սկսւում տաճկահայերի համար. սովը և կոտորածը բազմաթիւ հայերի ստիպում են ապաւինել Ռուսաստան։ Ստացւում է Վեհափառ Հայրապետի կոնդակը, որով առաջարկում է Սրբազանին աջակցել իրեն գաղթական հայերին օգնելու սրբազան գործում։ Գէորգ արքեպիսկոպոսը հրամայում է, նախ եկեղեցիներում նախընթաց նկարագրութեամբ թշուառների եղկելի վիճակի՝ գանձանակներ պատեցնել, անձամբ Զատիկի ճրագալոյցին մի սրտառու Քարոզ խօսելով և կարդալով Վեհափառի կոնդակը՝ ի գութ և կարեկցութիւն է շարժում Ռուսահայ եղբայրներին։ Այա դիմում է գանազան հաստատութիւններին, հրաւիրում է իւր մօտ բարեկեցիկ անձանց և յորդորելով նրանց՝ յաջողեցնում է հանգանակել և ուղարկել 9000 ըուբլի։ (Սրճագանք 1894 թ. №№ 45, 46, 54, 58, Նոր-Դար 1894 թ. №№ 67, 86, 89)։

Երբ 1896 թ. Տրապիզոնի կոտորածից ազատուած հայերը նուերով ապաստանում են Սուխում, տեղական

իշխանութիւնները արգելում են նրանց ափ իջնել և ստիպում վերադառնալ հայրենիք։ Տեղական հայ քահանան հեռագրում է Սրբազանին և օգնութիւն խնդրում։ Գէորգ արքեպիսկոպոսը արտասուելով՝ շտապում է կառավարչապետի մօտ, ներկայանում նրան և օգնութիւն հայցում թշուառների համար։ Կառավարչապետը հրամայում է անմիջապէս թոյլ տալ փախստականներին ափ իջնել։ Սրբազան հայրը քաջ գիտենալով նրանց անմիջական օգնութեան կարօտութիւնը՝ նոյն օրն ևեթ փոխարինաբար ճարւում է մի քանի հազար ըուբլի և փոխադրու՝ օգնութիւն հասցնելու թշուառներին. իսկ երեկոյեան առաջնորդարան է հրաւիրում Թիֆլիզի հարուստներից շատերին և հանգանակութիւն անում յօգուտ գաղթականների։ Ա. Մանթաշեանը ուշ է գալիս ժողովի և մանրամասնօրէն տեղեկանալով եղելութեանց մասին՝ ասում է Սրբազանին. «Ինչու էիր այդպէս նեղանում. միթէ ես պատրաստ չէի»։ և բանալով քսակը Սրբազանի առաջ, ասում է. «Սրբազան ջան, վերցրու ինչքան ուզում ես»։ Բայց Սրբազանը ամեն ինչ հոգացած լինելով՝ պատասխանում է. «Այ. Աղէքսանդր, քոյ քսակը ազգի շտեմարանն է, կարևոր դէպքում քոյ քսակը հարկաւոր կլինի»։ Տրապիզոնի արհաւիրքներին ենթարկուած դժբախտածների համար ուղարկում է 4000 ըուբլի։

Ախալքալաքի երկրաշարժից պատուհասածներին մեծապէս նպաստում է թէ դրամով և թէ հանդերձեղէնով, իւր ներկայացուցիչն էլ ուղարկելով առ տեղեան օգնելու և հոգեպէս մխիթարելու վշտացեալ ժողովրդին։ Իսկ գահի բարձրութիւնից շնորհուած մեծ նպաստի համար կատարում է յատուկ մաղթանք Կայսեր և նորա ընտանիքի արեւշատութեան համար։ (Մշակ 1899 թ. № 243)։ Այդ նպատակով Սրբազանը հանգանակում է աւելի քան 2500 ըուբլի։

1900 թուի Սասնոյ վերջին կոտորածից թշուառութեան մէջ մնացած անտէրունջ հայ գիւղերի այրիների և որբերի համար 3000 ըուբլի է ուղարկում Վեհափառ Հայրապետին, որ հասցնէ Կ. Պօլսի պատրիարքին՝ թշուառներին պահպանելու համար:

Հոգևորականների վիճակի համար Տ. Գէորգ արքեպիսկոպոսը հետևեալ կարևոր բարեփոխութիւններն է առնում:

Թիֆլիզի հայ քահանաները չնայած իրենց առաջնակարգ դիրքին՝ ապրում և գործում են անկախ միմեանցից, առանց մի ներքին բարոյական կապի: Նրանց մէջ չկայ միաբանական ոգի, որ նպաստէր նրանց բարոյական, մտաւոր և անտեսական շահերի զարգացման և այդպիսով նրանց բարձրացման:

Սկզբում Սրբ. հօր առաջարկութեամբ 1894 թ.՝ քահանաները ընտրում են տասներկու հոգուց բաղկացած միաբանական ժողով գործակալ քահանայի նախագահութեամբ: Նրանց յանձնում է ընկերական սիրով տնօրինել քահանաների ամեն տեսակ բողոքները միմեանց դէմ, քահանայական տուրքի, ծխերի հովուութեան և այլ ներքին յարաբերութեանց վերաբերեալ և աշխատել հաշտեցնել միմեանց հետ. (Նոր-Դար 1984 № 158, Մշակ № 110, Արձագանք № 110): Այդ ժողովը մի առժամանակ գոյութիւն ունենալուց յետոյ՝ մի խումբ քահանաների նախաձեռնութեամբ Գէորգ Սրբազանը մի ուրիշ յանձնաժողով է կազմակերպում «Թիֆլիզի հոյ քահանաների միաբանութիւն» անունով, աւելի վեհ նպատակով, որի պարտականութիւնն էր բարձր պահել հոգևոր կոչման նշանակութիւնը իշխանութեան և ժողովրդի առաջ և բարելաւել հոգևորականների փոխադարձ յարաբերութիւնը: Այդ ընկերութիւնը Վեհափառ Հայրապետի հաստատութեամբ սկսեց գործել, սակայն արտաքին հանգամանքներ

րի ստիպմամբ դադարեց Վեհափառի մի այլ կոնգակի համաձայն:

Նոյն հոգևորականների մտաւոր զարգացման, գրականութեան և գիտութեան հետ ծանօթանալու գործին նպաստած լինելու համար կառուց մի շինութիւն, ընթերցարան հիմնելու նպատակով. (Արձագանք № 74 1896 թ.): Բայց այդ գեղեցիկ գործը նոյնպէս արտաքին հանգամանքների պատճառով չիրագործուեց: Շինութեան մի մասը դարձաւ հիւրատուն, իսկ միւս մասը հոգևորականների ապահովութեան գանձարանի վարչութեան ատենատեղի, իսկ զընդունների վերադարձումից յետոյ՝ Վանաց եկեղեցու ծխական դպրոց:

Աւելի նշանակութիւն ունի տ. Գէորգ արքեպիսկոպոսի այն ձեռնարկութիւնը, որի նմանը գոյութիւն ունի Տաճկահայոց մէջ, այն է թագական հոգաբարձութիւնների կազմակերպելու գործը օրէնքի տրամադրութեան համաձայն: Ժողով է գումարում հասարակութեան առաջաւոր անձերից և ընտրել տալիս մի յանձնաժողով (Արձագանք 1894 թ. № 36): Այդ յանձնաժողովը Սրբազանի նախագահութեամբ շուտով կազմում է բազմաբովանդակ մի կանոնադրութիւն: Երկրորդ անգամ գումարուած ժողովը մի քանի փոփոխութիւններ մտցնելով՝ հաւանութիւն է տալիս այդ կանոնադրութեան, (Նոր-Դար 1894 № 77, Մշակ № 56) որ Գէորգ Սրբազանը մատուցանում է վեհափառ Հայրապետին ի հաստատութիւն իւր յայտարարութեամբ, թէ՛ ի մօտոյ ծանօթանալով եկեղեցիների վիճակին և հասու լինելով, որ շատերը խիստ կարօտում են ներքին և արտաքին բարեգաղութեան՝ տաճարների անշքութեան, եկեղեցական սպասաւորների պակասութեան, երգեցիկ խումբ չլինելու և այլ պատճառներով, որ կարգաւորեալ հասարակաց գանձանակներ չլինելով՝ աղքատներն ու կարօտեալ ծխականները մնում են առանց խնամարկութեան,

ուստի Հայ ժողովրդի մէջ նախկին բարեպաշտական գործունէութիւնը վերականգնելու համար՝ խնդրում է թոյլտուութիւն կազմելու Թիֆլիզում ծխական հոգաբարձութիւններ, ինչպէս որ կան այդպիսիները Ն.-Նախիջևանի և Աստրախանի թեմում և առաջարկելու դորա կանոնադրութիւնը ի հաստատութիւն կառավարութեան: Վեհափառ համակրելով այդ ձեռնարկութեան՝ կոնդակով պատուիրում է դիմել կառավարութեան և հայցել հաստատութիւն օրինասահման կարգով: Դիմումն է լինում Տ. Կառավարչապետին. սակայն վերջինիս Դիւանը 1896 թ. Յունիսին յայտնում է, թէ ներքին գործոց նախարարութիւնը հնարաւոր չէ գտնում Սրբազանի այս միջնորդութեան բաւարարութիւն տալ:

Ինչպէս Աստրախանում, առաւել ևս Տփլիսում ուշադրութիւն է դարձնում կանոնաւոր ներդաշնակուած քաղցրալուր երգեցողութեան վրայ: Մեր եկեղեցիներում մտցնում է Եկմալեանի յօրինած քառաձայն պատարագի երգեցողութիւնը:

Տեսնելով յայտնի երաժշտագէտ հանգ. Մ. Եկմալեանի ձիրքն և ընդունակութիւնը՝ ամեն կերպ խրախուսում, քաջալերում և հովանաւորում է նրան: Սրբազանի թոյլտուութեամբ նորա պատրաստած քառաձայն խումբը երգում է Վանաց եկեղեցում և զրաւում անթիւ աղօթաւորների: Սքանչելի կերպով ներդաշնակուած պատարագի երգեցողութիւնը հիացումն է պատճառում ունկնդիրներին և նրանց ջերմեռանդութիւնը շարժում:

Դէորդ Սրբազանը շուտով դիմում է Վեհափառ Հայրապետին և իրաւունք ստանում երաժշտագէտի աշխատութիւնը Եւրոպական նոտաների տպագրութեամբ լոյս ընծայելու, որպէս զի տարածուի և մատչելի դառնայ ամեն տեղ: Տպագրութեան իրաւունքն ստանալով՝ ժողով է գումարում և մի մասնաժողով ընտրել տալիս տպա-

գրութեան մասին հոգ տանելու համար: Այդ մասնաժողովի յորդորներով Թիֆլիզի քաղաքացի Գ. Մեղուխեանցը յանձն է առնում հրատարակելու այն, նուիրելով այդ գործի համար 3600 ռուբլի: Եւ այսօր այդ գործը դրուած է հրապարակի վրայ, որի յառաջաբանը լաւագոյն ապացոյց է Սրբազանի գործի ջերմ մասնակցութեան: (Արձագանք 1896 թ. № 31, 44, 65, 71): Աւելորդ չեմ համարում բերել այստեղ Եկմալեանի Սրբազան հօր ուղղած խնդրը.

«Ամենապատիւ Սրբազան հայր.

Սուրբ պատարագի ներդաշնակուած երգեցողութիւնը, որ ներկայումս ամուր հիմք է դրել Վանքի Մայր եկեղեցում և ընդհանուր գոհունակութիւն պատճառում բազմաթիւ աղօթաւորների՝ իւր յաջողութեամբ պարտական է Ձերդ Սրբազնութեան լուսամիտ եւ հայրական խնամքին: Ձերդ Սրբազնութիւնը նախ բարեհաճեցաք թոյլ տալ ներդաշնակուած երգեցողութիւնը Վանքի Մայր եկեղեցում իբրեւ փորձ, և ապա երբ փորձը գոհացուցիչ եղաւ՝ յանձն առաք միջնորդել Վեհափառ Կաթողիկոսի առաջ՝ Հայրապետական կոնդակով օրհնելու իմ աշխատանքը և թոյլատրելու նրա կիրառութիւնը Հայոց բոլոր եկեղեցիներում:

Ձերդ Սրբազնութեան այս գործի սկզբից ի վեր ցոյց տուած հովանաւարութիւնը ինձ վստահութիւն է ներշնչում այս անգամ ևս դիմել Ձերդ Բարձր Սրբազնութեան յաջողեցնելու պատարագի արարողութեան տպագրութիւնը, որով ներդաշնակուած երգեցողութիւնը ամենուրեք կտարածուի շնորհիւ Ձերդ Սրբազնութեան և անմահ յիշատակ կմնայ Ձեր լուսամիտ հոգացողութեան եւ յօգուտ ս. Եկեղեցութեան» (Արձագանք 1896 թ. № 32):

Տփլիսի պէս առաջնակարգ քաղաքի տիրացուների կրթութիւնը և գիտութիւնը շատ պակասաւոր էր. նրանք կամ Ներսիսեան դպրոցից կիսատ ելածներ էին կամ ծխա-

կանոններն աւարտած, այսինքն կիսակիրթներ: Նրանցից շատերը պատրաստուելով մի քանի ամիս քահանաների մօտ՝ քննութիւն էին տալիս Կոնսիստորիայում և քննութեան յաջողութիւնը կախուած էր լինում պատահականութիւնից: Թեմական ատենի տուած վկայականը բաւարար էր համարւում Սինօդի կողմից մէկին քահանայ ձեռնադրելու համար: Թէպէտ Սրբազան հօր հոգածութիւնն էր տալ ժողովրդին կրթուած իսկական հովիւներ և շատ թեմականաւարտներ ունի՝ ձեռնադրած, բայց տեսնելով այդպիսիների պակասութիւնը՝ նիւթական ապահովութեան պակասութեան պատճառով, և որ շատ չքաւոր գիւղեր չէր կարելի թողնել առանց քահանայի և կրօնական միւթարեան՝ մտածում է տիրացուների տգիտութեան չարիքի առաջն առնել, բարձրացնելով նրանց մտաւոր կրթութիւնը տեական և կազմակերպուած ուսմամբ: 1894 թ. բանում է մի ուսումնարան հասակաւոր դպիւրների համար երկու տարուայ դասընթացով. հրաւիրում է ձեռնհաս քահանաներ դասատու, ուսումն և պիտոյքները ձրի էին: (Արձագանք 1894 թ. № 60, Նոր-Պար № 68): Այդտեղ քաղաքի և վիճակի թերուս դպիւրները որոշ չափով պատրաստուեցան եկեղեցական գիտելիքների մէջ և յաջող դասընթացք աւարտողներից շատերը յետոյ քահանայ ձեռնադրուեցան վիճակի գիւղերի համար:

Նորա գործունէութեանն է պատկանում և թեմի գանազան պաշտօնեաներին կանոններ տալը: Նախ՝ հրատարակում է 1894 թ. հոգեւոր դպրոցների գանազան ընտրութիւնների կանոնները, որ յետոյ հրատարակեց աւելի բարեփոխուած: Նոյնպէս փոփոխութիւններով կանոններ տուաւ վիճակի գործակալներին և երեցփոխներին: 1895 թ. մի մասնաժողովի հետ մշակեց եկեղեցական ամեն տեսակ ընտրութեանց կանոնների նախագիծ, որ առաջարկեց Վեհին ի տնօրէնութիւն. նոյնը 1898 թուին նո-

րից ենթարկում է բարեփոխութեան օրէնսգէտ և փորձառու անձանց խորհրդով և ուղարկում կրկին ի հաստատութիւն:

Եկեղեցականների և ժողովրդեան վերաբերեալ մի շարք շահեկան կարգադրութիւնները ընտրուած են Գէորգ Արքեպիսկոպոսի գործունէութեան եղանակը, որոց համառօտ յիշատակութիւնն իսկ թող բաւական լինի գաղափար կազմելու նորա եկեղեցաւարութեան և ժողովրդասիրութեան աստիճանի մասին:

1897 թ. յունուարի 8-ին ի միջի այլոց գրում է Վեհափառ Հայրապետին, թէ Հայաստանեայց եկեղեցու Մ. Մաշտոցի կարեւորութիւնը խիստ զգալի լինելով իր թեմում, թէ պատկեր օծելու, թէ եկեղեցու հիմնարկէքի և օծման ժամանակ և թէ առհասարակ եկեղեցական պաշտամունքների անթերի պահպանութեան նկատմամբ և ոչ մի տեղ չլինելով այդ գրքից՝ խնդրում է կարգադրել տպագրելու այդ կարեւոր մատեանը:

Միւս կողմից պատուիրում է իր ստորադրեալներին բանիւ և գրով, որ ճիշտ և անխափան կատարեն Հայաստանեայց եկեղեցու ծիսարանի խրատները ամեն խորհուրդների և օրինակատարութիւնների ժամանակ. ինչպէս նաև պսակի ժամանակ՝ առաջագոյն խոտտովանացնել փեսան և հարսը առանձին առանձին, իմանալու, թէ՛ նոքա անբռնադատ սիրով և հաւանութեամբ են եկել ամուսնութեան, թէ աւամայ և արտաքին ճնշումներից ստիպուած. որ նոքա ննջեցեալների հոգեհանգստեան կարգը կատարեն նոյն ծիսարանի և Հայրապետական կանոնական կոնդակների համեմատ, գերծ ամեն տեսակ նորամոյծ և օտար սովորութիւններից:

Մտածում է բարելաւել Թիֆլիզի հայ քահանաների տնտեսական վիճակը և աւելի պատուաւոր ձևով նրանց նիւթականը կանոնաւորել. Թիֆլիզի հայ քահանաներին

ուծիկ սահմանելու միտքն է յղանում: Այդ պատճառով տպագրուած հարցերի ցուցակ է ուղարկում քահանաներին, որպէս զի իւրաքանչիւրն մանրամասնօրէն մուծէ իւր ստացած եկեղեցական եկամուտները, որ կարևոր նիւթերն ժողովելուց յետոյ՝ կարգաւորէր քահանաներին վերաբերեալ այդ կարևորագոյն խնդիրը: Բայց Թիֆլիզի առաջնորդութիւնից հեռանալը խանգարում է իրագործելու այդ գեղեցիկ գործը:

Ճանապարհորդում է իւր թեմի Շուլաւէրի, Լօուոյ, Ղազախի և Թիֆլիզի գաւառի գործակալութիւնների բոլոր գիւղերը՝ ծանօթանում է տեղական ժողովրդեան հոգևոր պէտքերի հետ և կոնսիստորիային յանձնելով մանրամասն ցուցակ, թէ նոցանից որ գիւղերում եկեղեցիներ չկան, որոնք վերաշինութեան կամ նորոգութեան են կարօտ, նոցանից որը պակասութիւն ունի անօթների, զգեստների, զարդերի, միաբանից բնակարանների և այլն և այլն, պատուիրում է կանոնաւորել և լրացնել բոլոր նկարագրած թերութիւնները և հսկել եկեղեցական գումարների պահպանութեան. միաժամանակ թեմական տեսչի ուշադրութիւնն է դարձնում և դպրոցական պակասութեանց և թերութիւնների վրայ: Իւր շրջագայած տեղերում բացատրում է ուսման կարևորութիւնը և յորդորում բանալ ուսումնարաններ, հայրաբար խրատում է ժողովրդին հեռու մնալ կործանիչ սովորութիւններից և լինել միաբան ու Աստուածասէր: Ամեն տեղ հոգեպէս կենդանութիւն է ներշնչում իւր բանաւոր հօտին: Սրբազան հօր պարզ և ուրախ բնակւորութիւնը գրաւում է բոլոր գիւղականների և պաշտօնեաների սիրտը, որոնք ամեն տեղ ընդունում են նրան պատուական և ուրախալից կերպով (Սրբազանք 1895 թ. № 73, 98, 100, 101. Նոր-Պար 1895 թ. № 146):

Իւր թեմի այն տեղերում, ուր ծագում էին տարա-

ձայնութիւններ կամ երկպառակութիւն, կամ տարիներով գործերը երեսի վրայ մնացած էին և հարկաւորում էր հեղինակաւոր անձի ազդեցութիւնը, այդ գործերը յօգուտ ժողովրդեան և եկեղեցու շինութեանն ու յառաջագիմութեանը կանոնաւորելու համար, ինքն էր անձամբ հասնում և յաջողութեամբ խաղաղութիւն ձգում և գործերի յաջողութեամբ տալիս:

Այսպէս 1895 թուին այցելում է Գանձակ, շրջում է եկեղեցիները, դպրոցները, այցելում յայտնի պաշտօնական անձանց և առաջնակարգ քաղաքացիներին. քարոզ է խօսում շաբաթ երեկոյեան և կիրակէ օրը, յանդիմանում ժողովրդեան իրենց անտարբերութեան համար թէ դէպի եկեղեցին և թէ դպրոցը, որ խաբսուղ դրութեան մէջն էր: Երկուշաբթի առաւօտեան հրաւիրում է դպրոցների հոգաբարձուներին և երեցփոխներին ուսումնական և եկեղեցական մի քանի կարևոր գործերի մասին խորհրդակցելու. իսկ երեկոյեան բարձր դիրք ունեցող Գանձակեցիներից կազմում է ժողով, որտեղ Սրբազանի նախագահութեամբ որոշում են. 1) եկեղեցական աղքատանոցի անունով Բագուի դրամատան մէջ պահուող 10,000 ռուբլին (որ քաղաքի երկու եկեղեցիների ծխականների մէջ պայքառի պատճառ էր դարձել) յատկացնել երկդասեան դպրոցի շինութեան, որն սկսել շուտով մայր եկեղեցուն պատկանող հողի վրայ. շինութեան համար ընտրում են հոգաբարձուներ: 2) Սրբազան հօր միջոցով պ. Նահանգապետի խնդրած եկեղեցապատկան Սրափու անուանած գետնից յատկացնել 10 գեսետին հող գինեգործութեան և այգեգործութեան նոր դպրոց կառուցանելու համար որոշեալ պայմաններով. 3) Եկեղեցապատկան նորակառոյց շէնք բաղանիքը կառավարել հոգաբարձութեան և երեսփոխի ձեռքով մի տարի ժամանակով՝ եկամուտի մօտաւոր չափն իմանալու համար և ապա ըստ այնմ կապալով

տալ և այլ մի քանի կարևոր խնդիրներ: Ահա ինչ է գրուած այդ ժողովի մասին Արձագանքի յօդուածագիրը. «Այսպիսի ծխական ժողովների արդիւնքը ակներև է. մի ժողովով բան չի դառնալ... յաջորդ հայրերը թողալ-խատեն այս խնդրի համար»: (Արձագանք 1895 թ. № 123 Նոր-Պար № 187):

Սրբազան հօր երկրորդ այցելութիւնը Քութայիսին 1897 թուի մայիսին ունենում է բարերար հետեանք: Ահա ինչ է գրում թղթակիցը. «Միւս օրը ներկայացան նրա հրաւիրմամբ այն բոլոր անձինք, որոնց մէջ եկեղեցական և ուսումնական գործերի վերաբերմամբ զանազան տարաձայնութիւններ էր տեղի ունեցել: Սրբազանը ամենքի թեր ու դէմը լսելով, գործերը կարգի բերեց և հակառակ կողմերի մէջ՝ իւր խաղաղարար և համոզեցուցիչ ազդեցութեամբ միութիւն հաստատեց. ապա «պահպանիչով ճանապարհ դրեց ամենքին: Ամսոյս 10-ին, շաբաթ երեկոյեան, հանդիսաւոր մօտք եղաւ վերանորոգուած եկեղեցին... Կիւրակէ օրը պատարագի վերջը թեմակալ Սրբազան առաջնորդը բեմ բարձրացաւ ու ատենաբանեց, ուր պարզ կերպով նկարագրեց հովուական վսեմ նշանակութիւնը և բանաւոր հօտի առնչութիւնն առ ազգն ու եկեղեցին, ամենքին օրհնելով և զգուշացնելով, որ չգայթակղուին աշխարհային խաբուսիկ պատրանքներէ»:

Ժողովուրդը շատ գոհ մնաց իւր հովուապետի մխիթարական այցելութիւնից, որով կարգի դրեց եկեղեցական և երեսփոխական մի քանի հարցեր, խրախուսելով ամենքին դէպի սէր և խաղաղութիւն: (Արձագանք 1897 թ. № 56):

Եղիշէ վարդապետ Մուրադեանը իր փոխանորդութեան ժամանակ Գորում, գտնելով երեսփոխանների հաշիւների մէջ անկանոնութիւններ և զեղծումներ՝ յայտնում է այդ թեմակալին, իսկ երեցփոխներն և քահանաներն էլ

միաբանելով բողոքում են Եղիշէի դէմ: Թէպէտ Գէորգ արքեպիսկոպոսը սկզբում կամենում էր ուղարկել քննիչ քահանայ, բայց նկատելով, որ կողմնապահութիւն պէտք է տեղի ունենայ և քաղաքի մէջ որոշ ազդեցիկ անձինք աշառութեամբ են տրամադրուած դէպի այդ խնդիրը՝ ճշմարտութիւնն երևան հանելու համար՝ ինքն է տնձաւոր գնում Գորի քննութեան: Առ տեղեւան մանրամասնութեամբ քննելով հաշիւները, դնելով նորոգութիւնները՝ գտաւ երեսփոխանների հաշիւների և գործերի մէջ զեղծումներ և անկանոնութիւններ. յանդիմանում է նրանց, որ իրենց պակասութիւնները ծածկելու համար անիրաւացի տեղ բողոքել են փոխանորդի դէմ, որ անպարտ էր և մաքուր: Եւ ի խրախոյս փոխանորդի հաւատարմութեան շնորհում է նրան ծաղկեայ փիլոն և առաջարկում հայրապետական պարգևի:

Գէորգ Սրբազանը գիտէ բարձր պահել հայ եկեղեցականի և իւր արժանիքն ու պատիւը օտարազգիների, մանաւանդ Ռուս բարձր աստիճանաւորների առաջ շնորհիւ իւր հմտութեան և հասկացողութեան, երբէք չդաւաճանելով իւր ազգի և եկեղեցու շահերին, այլ ընդհակառակն աւելի յարգի կացուցանելով:

1896 թուին գաղտնի խորհրդական Մասալովը իշխան Ուխտումսկու ուղեկցութեամբ, որոնք եկել էին Հայոց զպրօցների և եկեղեցու դրութեան հետ ծանօթանալու, այցելում է Գէորգ սրբազանին, որի բարձր արժանաւորութիւնները նա առիթ էր ունեցել գնահատել Պետերբուրգում, երբ նորին բարձր Սրբազնութիւնը ուղևորուել էր իբրև ամենայն հայոց կաթողիկոսի ներկայացուցիչ: Տեսակցութիւնը մտերմական էր. կէս ժամ խօսելուց յետոյ Սրբազանը անձամբ առաջնորդում է բարձրաստիճան հիւրերին Վանքի Մայր եկեղեցին և ապա Ներսիսեան դպրանոց: Այնտեղ ներկայ եղան երկու դասարան-

ներում Ռուսաց լեզուի դասերին և շատ գոհ մնում աշակերտների տուած պատասխանից. խում են նոյնպէս Տ. Սահակ քահանայի կրօնի դասը V դասարանում: Այցելում են դպրոցի սեղանատունը, ննջարանը: Այնտեղից դարձեալ Սրբազանի առաջնորդութեամբ գնում Մողնու եկեղեցին, և ապա Յովնանեան դպրոցը:

Կիրակէ Սեպտեմբերի 15-ին Գէորգ արքեպիսկոպոսը մի հացկերոյթ է տալիս ի պատիւ բարձրաստիճան հիւրերի: Նուրբ արուեստով կատարուած մենոյն հիացումն է պատճառում Ս. Առաջնորդի հիւրերին: Ծաղին երգում էր Ներսիսեան դպրանոցի երգեցիկ խումբը շնորհալի եքմալեանի ղեկավարութեամբ. խմբի երգած «Հայր Մեր»-ի հմտութեամբ վերածուած եղանակը խոր տպաւորութիւն է գործում ունկընդիրների վրայ:

Գէորգ Սրբազանը եկեղեցիների բարեկարգութեան վերաբերեալ խնդիրներում գործում էր քահանաների և երեսփոխանների որոշումների համաձայն, կարևոր դէպքերում հրաւիրելով նրանց իւր մօտ ժողովների: 1895 թուին Մողնու եկեղեցու երեցփոխ Ալիբէգեանցը առաջարկում է դիպազարդի, դիասեղանի, թազի անունով ստացուող արդիւնքները վերացնել և նրանց փոխարէն կանոն դնել, որ ծուխը օրինակատարութիւնների համար՝ թաղման, պսակի և այլն մոմը չըգնի մոմավաճառութեան կրպակից, այլ եկեղեցուց: Այդ խնդրի համար և այլ կարևոր հարցերի մասին Սրբազանը ժողով է գումարում աւագ քահանաների և երեսփոխանների և առաջարկում նրանց բարեհայեցողութեան: Ժողովը ձայների մեծամասնութեամբ մերժում է պ. Ալիբէգեանցի առաջարկութիւնը: Նոյն ժողովում որոշում են պահել եկեղեցիներում երգեցիկ խմբեր, ամեն տարուայ վերջը մի ամսուայ ընթացքում ներկայացնել հաշիւները, եկեղեցիները մաքուր պահել, գիշերապահներ ունենալ, միաձև և միագոյն շապիկներ, շուրջառ-

ներ գործածել, ժամերգութիւնն միաժամանակ սկսել, և այդ որոշումների մասին կազմում արձանագրութիւն: (Նոր-Դար 1895 թ. № 175):

Ապա Սրբազան հայրը համաձայն կայացրած որոշումների հրամայում է ճշտութեամբ կատարել այն: (Նոր-Դար 1895 թ. № 176):

Հրասայում է Կոնսիստորիային կարգ ու կանոնի տակ դնել դրամական հաշիւները և ինքն իւր աշալուրջ ուշադրութեամբ հետամուտ է լինում ամեն տեսակ հաշիւների կանոնաւորութեանց և արդեանց անթերի գործադրութեան: Գէորգ Սրբազանի ժամանակ Կոնսիստորիան տրնտեսում է վիճակային արդիւնքներից մի խոշոր գումար:

Կոնսիստորիայի գիււանը (արխիւը) գտնում էր վերին աստիճանի խառն և անկարգ դրութեան մէջ: Գէորգ Սրբազանն այն կանոնաւորելու համար՝ հրաւիրում է ձեռնհաս քահանաների և այլ անձանց, որոնք մի քանի ամսուայ անդուլ աշխատանքով շուտով բարեկարգ դրութեան են վերածում:

1895 թուին այցելում է Ախալցխայ և ի ցաւ սրտի տեսնում, որ հանգուցեալ բարերար Կարապետ Արքեպիսկոպոս Բագրատունու գերեզմանի վրայ, որ մեծագին կալուածներ ունի նուիրած տեղոյն Ս. Փրկիչ եկեղեցուն հասարակ տապանաքար չկայ. վերադառնալով Տփլիս՝ առաջադրում է նոյն եկեղեցու երեցփոխին մի վայելուչ տապանաքարով զարդարել հանգուցեալ բարերարի գերեզմանը և շուտով Սրբազան հօր հրամանը կատարում է:

Ախալցխայի յաջորդին պատուիրում է յորդորել ժողովրդին՝ գանձանակ ոահմանել աղքատների և տնանկների համար:

Վանաց աւագ եկեղեցուն պատկանող աւագաբեր կղզին, որի եկամուտով օգտւում էր վիճակային Կոնսիստորիան, մինչև Սուրէնեանց Սրբազանի առաջնորդու-

Թիւնը տրւում էր կապալով ըստ բարեհայեցողութեան գանձապահների, առանց աճրգի, տարեկան 100-120 ուրբլով: Գէորգ Սրբազանը գտնելով այդպիսի ձևը օրէնքին հակառակ և Կոնստնտնուպոլի շահերին վնասակար՝ հրամայում է այնուհետև տալ աճուրդով Կոնստնտնուպոլի Ատենում: Եւ այդ միջոցով 120 ուրբլի կապալադրամը հասցնում է 1000-1200 ուրբլու, որ ստացւում է այժմ էլ: Այդ կղզու արդիւնքով օգտւում է այժմ վանաց աւ. եկեղեցու ծխական դպրոցը:

Գէորգ Սրբազանի առաջնորդութիւնը Տփլիսում բարեշաղոգ ժամանակին չեղաւ: Նա իբրև եկեղեցուն անձնուէր պաշտօնեայ՝ հաճելի չէր իշխան Գօլիցինին: Մկրտիչ Կաթողիկոսը ռաիպուած 1901 թուին էջմիածին է կանչում Գէորգ Սրբազանին, առանց արձակելու պաշտօնից (Նոր-Դար 1901 թ. № 127):

Գէորգ Արքեպիսկոպոսի պաշտօնից հեռանալը մեծ ցաւ է պատճառում իր ընդարձակ թեմի պաշտօնեաներին և ժողովրդին: Ամեն կողմից համակրական և ցաւակցական ուղերձներ են ուղարկւում նրա անունով, որոնց մէջ ցայտուն կերպով արտայայտւում է, թէ որպիսի յարգանք, հեղինակութեան և սէր էր վայելում թէ հոգևորականների և թէ աշխարհականների կողմից: Այսպէս ստանում է ուղերձներ Գօրի քաղաքից և վիճակից, Սդնախի և Թէլաւի վիճակներից, Տփլիսայ գաւառից, Բաթումից, Ախալցխայից, Արդուինից, Բուլթախից, Թիֆլիզի Կոնստանաց Անապատի քահանայից, մայրապետից և աւագ միաբաններից, Թիֆլիզ քաղաքի մի քանի առաջնակարգ մարդկանցից և այլ տեղերից, թէ հոգևորականներից և թէ աշխարհականներից: Իսկ Թիֆլիզ քաղաքի քահանայական դասը մատուցեց մի շքեղ արծաթապատ ալբօմ ընտիր նկարներով զարդարուած և հետևեալ ուղերձը:

«Ո՛րպէս և կամ գինչ մարգարտահիւս յեռուցմամբ

ներբողս գովասանաց դրուագել մարթասցուք ՚ի պսակ պանծալի գործոցդ, Հայր Առաքելական, զի՞նչ այլ, եթէ ոչ զհոգեբուղի Շարակնոցն զհոգեխաղաց շնորհագիր «Որ առեալ զսպառազինութեան զզրահս հաւատոյ ՚ի սիրտ քո և ընկալեալ ՚ի գլուխ սաղաւարտ փրկութեան գնշան խաչին, սուսեր ընդ մէջ ածեալ զճշմարիտ Սուրբ Հոգին»։ հայրախնամ տեսչութեամբ ՚ի գործ Առաջնորդական պաշտաման ութն ամեայ հովուական արթուն Կիտողութեամբ և հսկմամբ արածեցեր զհօտ փարախիդ ՚ի վայրի դալարւոյ և առ ջոնըս հանգստեան սնուցանելով:

Դու էիր, ըստ Եզեկիէլի դէտ ՚ի վերայ Տանն Աստուծոյ և ժողովրդեան Հայոց, որք ՚ի Վերս. լսէիր պատգամս Ամենակալէն և աւանդէիր Հօտիդ:

Դու էիր, ըստ Եզեկիէլի, պահապան Տան Տեառն և սեղանոյն Սրբութեանց, որ «Պահէիր զպահպանութիւն սեղանոյն»: Դու պահեցիր զիրաւունս ժառանգութեան Հայրենի ցանկոյն և եղեր զանձն ի վերայ կարգացն նախնեաց և Հայրենի օրինաց, քանզի իբրև «Մշակ անպարտելի Կաթողիկէ եկեղեցւոյն», ոչ թողեր մատնել ՚ի կորուստ հիմանց և պատուարաց, իմա սեպհականութեանց մերս Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ: Դու էիր Հո իւ հանգոյն Եսայեայ Հովուին, որ «Բազկաւ իւրով ժողովէր զգառինս ե ՚ի ծոց իւր կրէր գնոսս» և Դու ՚ի փարախ ժողովէիր զգառինս և ի ծոց խնամոցդ դաստիարակութեան կրէիր գնոսս: Դու էիր Արհի մեծաշէն հանգոյն Հայրապետաց, Վարդապետաց և Առաջնորդաց եկեղեցւոյս Հայաստանեայց

Նախանձախնդիր լեալ մեծ վայելչութեան և փառաց Տաճարի Տեառն Աստուծոյ հիմնեցեր և վայելչացուցեր ՚ի թէմիդ զեկեղեցիս յոլովս և պսակ պարծանաց մեծաշէն գործոցդ, յանդիման վկայ անսասան՝ մայր եկեղեցին Վանաց, հիացուցիչն տեսողաց Հայ որդւոց բարեպաշտից:

Ուստի և մեք երիցունքս Տփխիսայ ջամբեալ կաթամբ Հայրազորով խնամոցդ յընթացս ութնամեայ ժամանակի՝ զերախտիսդ մոռանալ ոչ կարեմք և զԱնունդ, մեզ ցանկալի, իբրև զգիր կենդանի 'ի տախտակի սրտից մերոց անջնջելի դրոշմեալ՝ պատուեմք զանմոռանալի դրոշմեալ՝ պատուեմք զանմոռանալի զքո յիշատակ։ Եւ ընդ երախտագիտական ուղերձիս՝ որպէս զայրւոյն լուսայն 'ի հաճոյական պատարագ սիրոյն առ Աստուած նուիրաբերեալ՝ նոյնպէս և մենք զկենդանագիրս Հայ հոգևոր եղբայրութեան Տփխիսոյ, ժաղթեմք 'ի կենդանատուէն բոլորեցուն երկարել զաւուրս պանդխտութեանց յամայր ամօք բարեկենդանութեան, բարգաւաճել իմաստութեամբ զմիտս Քո և զհանճար՝ առ 'իպտղաբերել 'ի գործս արգիւնաւորութեան յօգուտ և ի պարծանս Ազգիս Հայոց և եկեղեցւոյն Հայաստանեայ։

Մատչելով 'ի համբոյր սուրբ Աջոյդ սիրեցեալ Հօրը՝ քնամք Հայ քահանայք Տփխիսայ։

Իրոնէսիոս Վարդ. Ղամաղեանց
Գրիգոր աւ. քահանայ Տէր-Բարսեղեանց
Ղևոնդ աւ. քահ. Խարազեանց
Արսէն աւ. քահ. Բագրատունի
Գիւտ աւ. քահ. Աղանեանց
Ներսէս աւ. քահ Աբովեանց
Սարգիս աւ. քահ. Իգիթեանց
Գէորգ աւ. քահ. Տէրտէրեանց
Գրիգոր աւ. քահ. Մանդակունի
Գէորգ աւ. քահ. Աբուլեանց
Աղէքսանդր աւ. քահ. Տէր-Վարդանեանց
Համազասպ աւ. քահ. Տէր-Յովհաննէսեանց
Սիմէօն քահ. Չմշկեան
Յոնհաննէս քահ. Տէր-Գրիգորեանց
Գրիգոր քահ. Շահնազարեանց

Գրիգորիս քահ. Երզնկեանց
Գրիգորիս քահ. Մատինեանց
Գրիգոր քահ. Կախոյեանց
Գալուստ քահ. Աբուլեանց
Գէորգ քահ. Մեհրաբեանց
Յովհաննէս քահ. Իւզբաշեանց
Բարսեղ քահ. Տէր-Բարսեղեանց
Անաօն քահ. Տէր-Խաչատրեան
Գրիգոր քահ. Խաչաէնաթեանց
Գէորգ քահ. Տէր-Աւետիսեանց
Յովսէփ քահ. Աբուլեանց
Վարդան քահ. Տէր-Ղևոնդեանց
Գէորգ քահ. Սաղոյեանց
Յովհաննէս քահ. Ամիրխանեանց
Զաքարիա քահ. Զարդեղեանց
Ղևոնդ քահ. Մամիկոնեանց
Մկրտիչ քահ. Գուլամիրեանց
Գրիգոր քահ. Շերմազանեանց
Թադէոս քահ. Երուանդեանց
Յարութիւն քահ. Շախեանց
Գրիգոր քահ. Մատինեանց
Գաբրիէլ քահ. Տէր-Գաբրիէլեանց
Կոստանդին քահ. Արարատեանց
Սարգիս քահ. Շիօյեանց

Ալբօմի մէջն էր դրուած նաև մատուցանող քահանաների լուսանկարը Գրիգոր աւ. քահանայ Մանդակունու և Զաքարիա քահ. Զարդեղեանի հետեւալ ուղերձներէ հետ, Հրածորան Հոգւոյն ցնցուղբ բոցավառի 'ի սիրտ մեր,

Սիրախմբեալ 'ի մի կաճառ յեռումք ուղերձ 'ի նուէր, Արդ վաղվաղեմք զերախտագէտ վեհիցն զգործ խնկելի, Բաց ճակատուք Ձեզ Սրբազան ձօնել համբոյր բերկրալի։ Վրաստանի հանուրց Հայոց յօրէ կարգման զիտապետ,

Խաղաղականն Դուք ընտրեցիք զպողոտայն լուսահետ,
 'ի բաղաքիս և ի թէմիս զեկեղեցիս համօրէն
 Հարկապահանջ նորոգութեամբ հրաշացուցիք ճոխօրէն:
 Դուք կառուցիք զընծայարանն, Դուք զՎանաց ս. տաճար,
 Զարմանազան ճոխ նկարուք զարդարեցիք լուսավառ,
 Զգաւթն սուրբ Տաճարին Դուք հիմնովին փոխեցիք,
 Հրապուրելի տեսարանօք նոր ի նորոյ կերտեցիք:
 Տեսչութեան Ձեր յանձնեալ զհօտն ի ս. փարախ պահեցիք
 Կեանք և պատիւ յօգուտ նորին միշտ և յաւէտ զոհեցիք,
 Յաւ 'ի միոյ հօտին Փրկչի ցաւ Ձեր անձին կրեցիք,
 Զամենեսեան 'ի դաւարւոյ 'ի ջուրս հանգիստ սնուցիք:
 Խաղաղութիւն և սէր անկեղծ էր միշտ և է Ձեր բաղձանք,
 Խաղաղ սիրով մեզ հովուելոյ ոչ խնայեցիք, ոչ մի ջանք.
 Կերպ-կերպ զմեզ շնորհօք Ձերովք երախտապարտ կա,
 ցուցիք,
 Զամենեսեան անկեղծ սիրով 'ի սէր Հօրդ զօղեցիք:
 Առ այս ձօնեմք 'ի հրաժեշտիս զուղերձ մեր ս. զգացմանց,
 Ձեզ քաջարուն Սրբազան Հայր Արհիդ Գէորգ Սուրէ-
 նեանց,
 Մաղթելով Ձեզ երջանիկ կեանք, հայցեմք 'ի Ձէնջ
 օրհնութիւն,
 Երախտագէտ որդւոցս Հօրդ տո՛ւք օրհնութիւն
 օրհնութիւն:

Գ. ա. ք. Մաղակնունի

Տիրաշնորհ Տէր հօտիս փոքու թեմիս Հայոց Վրաստանի,
 է՛ միշտ զբողմեալ 'ի հօտիդ սիրտս, Քոյդ Մեծ գործ Բուրաստանի
 Բարբոնականդ սուրբ նախանձու վառեալ ի սէր Քոյդ հօտի,
 Զարգարեցար զինու Հոգւոյն ածեալը զՔե Կուռ—Դօտի:
 Արդարութիւն, իմաստութիւն, խոհեմութիւն և ս. Գիրք,
 Քեզ արարեալ աթոռակից, տիւ և գիշեր՝ ի Քո Գիրկ,
 Այն ինչ խորդայ յաշխատանաց համայն բնութիւն խոր ի քուն,
 Բարբոնիդ՝ զնոր, անքուն աչօք, յարգարես Քո զհօտի տուն:

Իմաստութեամբ նորոգեցեր զեկեղեցին—զՄայր Տաճար,
 Առաքինեացն է անմահ գործդ՝ ով որ ելցէ հակաճառ.
 Աստուածային հնչեցուցեր զլեզու հրակէզ քառաճայն,
 Աստուածախօս ասեմ զԴաւթեանն՝ զքնար հոգւոյն քաղցրաճայն:
 Բարբոնիդ վեհ, որպէս Դաւիթ, հեղարարոյ և խաղաղ,
 Դարանամուտ իսկ ոսոխացդ՝ ոչ արգելիւր զՔոյդ Մախաղ.
 Եւ ի նոսա ծաւալեցեր առատապէս Քոյդ զշնորհ,
 Ղեկավար միշտ 'ի բարի գործս, բայց նոքա մնան ապաշնորհ:
 Երանի Քեզ, վեհ հօտապետ, զի յար զկենաց ունիս բան,
 Առաքինի զերթ Առաքեալ, սիրես զսիւնս սիրոյ տան.
 Նա երանի՛, զի Քոյդ ըզհօտ ոչ թողուս բնաւ անտէրունջ,
 Յիր-ցան լինել ի մէջ գայլոց որպէս զգառինս անմուռն:
 Յար յուշ ածես զըզուեալ հօտիդ՝ տալ զԱստուծոյն Աստուծոյ,
 Ուրախութեամբ նաև զԿայսերն տալ միշտ Կայսեր Աստուծով.
 Սուրբ սկըզբունքդ այս Յիսուսաւանդ՝ զբարիս հօտիդ մատուցեն,
 Ապա Աստուած և Մեծ Կայսրըն՝ Քեզ ըզարիտուրն հատուցեն:


Զ. ք. Զարդեղեանց

Թիֆլիզի պատուաւոր քաղաքացիները և առաջնա-
 կարգ վաճառականները, իրենց համակրութիւնը և յար-
 գանքը յայտնելու համար, ի պատիւ Գէորգ Արքեպիսկո-
 պոսի հրաժեշտի հացկերոյթ տուին Թիֆլիսի Ժողովարա-
 նի ամարային դահլիճում: Ահա զրա մանրամասն նկարա-
 գրութիւնը Նոր-Դարի 1901 թ. № 142-ից.

«Կիրակի, սեպտ. 9-ին, Թիֆլիսի ամարային Ժողո-
 վարանի դահլիճում, տեղի ունեցաւ սրբազան Գէորգ ար-
 քեպիսկոպոս Սուրէնեանի պատուին Թիֆլիսի հասարակու-
 թեան կողմից տրուած հրաժեշտի ճաշկերոյթը: Ժամը 4-ին
 Սրբազանը մտաւ Ժողովարան. երգիչներն «Ուրախ լեր ս.
 եկեղեցի» շարականը երգեցին: Ժամը ճիշտ 4-ից քիչ անց
 նստեցին սեղանի: Առաջին բաժակը մասնաժողովի անդամ
 բժ. Նաւասարդեանն առաջարկեց Թագաւոր Կայսրի թան-
 կագին կենացը, որն ընդունուեց յոտնկայս, բռնոն

«ուրա»-ով, իսկ երգեցիկ խումբն անմիջապէս հնչեցրեց գեղեցիկ կերպով ըստ պ. Եկմալեանի քառաձայն «Տէր պահեա զԿայսրն մեր» օրհներգը՝ խմբապետութեամբ պ. Բ. Բերինեանի: Յետոյ առաջարկուեց Վեհափառ Կաթողիկոսի կենացը, խումբը երգեց «Տէր կեցո՛ւ դու զհայս» մաղթանքը: Երրորդը բաժակն առաջարկուեց նորին բարձր Սրբազնութեան կենացը, որի ժամանակ բժ. Նաւասարդեանը ոգևորուած մի քանի խօսքով բացատրեց, որ սրբազանի օրով և նրա արիաջան աշխատութեամբ տեղի ունեցան բարեփոխումներ, շեշտեց, որ նա խաղաղ կառավարել է իւր թեմը: Ապա պ. Սալամբէկեանը խօսեց վանքի վերանորոգութեան մասին, որը տեղի ունեցաւ սրբազանի օրով: Յետոյ խօսեցին ուրիշները: Խումբն անմիջապէս երգեց «Ով հայոց Աստուած» քառաձայն երգը: Ապա յաջորդաբար առաջարկուեցին կենացներ—Յուսիկ սրբազանի և Գարեգին վարդ. Յովսէփեանի: Ճառեր խօսեցին և Յուսիկ սրբազանն ու Յովսէփեան վարդ.: Երգիչները մէջ ընդ մէջ երգում էին ներդաշնակ երգեր՝ «Լոնց ամպերը», «Ով դու բարեկամ», «Ոչ փող զարկինք» և այլն: Իսկ վերջում խօսեց ինքը Գէորգ սրբազանը, բացատրելով ճաշկերոյթի նշանակութիւնը և յայտնելով, որ ինքը երբէք չի մոռանալ իւր ծննդավայր Թիֆլիս քաղաքը, յիշելով միշտ իւր ժողովուրդը, որի երախտագիտութիւնն ինքը մեծ գոհութեամբ և շնորհակալութեամբ է ընդունում, բարեմաղթելով հանդերձ կեանք և երջանիկ օրեր. ժողովուրդը գոչեց ուժգին. «Կեցցէ, կեցցէ սրբազանը» և յայտնեց իւր շնորհակալութիւնը սրբազանին: Ժամը 6-ին վերջացաւ ճաշկերոյթը հայր Մերով:

1901 թ. Նոյեմբերի 18-ին Թիֆլիզի հայ պատուաւոր քաղաքացիների և վաճառականների կողմից մի պատգամաւորութիւն մատուցանում է Գէորգ Արքեպիսկոպոսին Թաւշեայ ոսկեզօծ եմփօրոն, թանգարժէք ընծաներ և



Թիֆլիզի առաջնակարգ պատուաւոր քաղաքացիների կողմից Ամենապատիւ Տէր-Գէորգ Արքեպիսկոպոսի պատուին 1901 թ. սեպտեմբերի 9-ին տրուած հրաժեշտի հացկերոյթ: Թիւ մասնակցողների խմբանկարը:

Հացկերոյթին մասնակցողներն ազգ՝ անունները:

Գէորգ Արքեպիսկոպոս Սուրէնեանց, Յուսիկ Նախկոպոս Մովսիսեանց, Գարեգին Վար. Յովսէփեանց. Գրիգոր ա. ք. Տէր-Բարսեղեանց, Լևոնդ ա. ք. Խորազեանց, Արսէն ա. ք. Բագրատունի, Սարգիս ք. Շիօյեանց, Գէորգ Եւանգուլեանց քաղաքագլուխ, Նազոր Դաւթեանց վաճառականաց պետ, Կարապետ Սերովբեանց ասնափապետաց գլխաւոր, Գրիգոր Դորդանեանց գեներալ, Բագրատ Նաւասարդեանց բժշկապետ, Գրիգոր Տէր-Գրիգորեանց բժշկ. Աղէքսանդր Գիշմիշեանց իսկական պետ. խորհ. գրաքննիչ, Յովսէփ Տիգրանեանց գնդապետ, Աղէքսանդր Սուրէնեանց գնդապետ, Կոստանդին Ալիսանեանց առևտր. դրամ. կառ. Գէորգ Տէր-Աստուածատրեանց դրամատան կառ. Իշխան Աղէքսանդր Բէհրութեանց աստիճ. Սուրբատէս Մէլիք-Աղամեանց փաստ, Պանոյ Մանգէնեանց բժ., Նիկողայոս Գրիգորեանց ճարտ., Կարապետ Գոշարեանց բժ., Աղէք. Գալանթարեանց հաշ., Միքայէլ Սալամբէգեանց ճարտար. Լևոն Բաստամեանց ճարտ., Բագրատ Ալիբէգեանց ա. կար. վաճառականներ. Աղէքսանր Այվազեանց, Գրիգոր Բայանդուրեանց, Պողոս Դաւթեան, Գէորգ Զոհրաբեանց, Դաւիթ Խորազեանց, Ս. Կաֆեան, Ս. Գիւլպէնկեան, Յ. Հախվերդեանց, Ա. Դուկասեանց, Ռ. Մարտիրոսեանց, Ա. Միլեանց, Գ. Մանթաշեանց, Ե. Յակովբեանց, Մ. Շաղիւնեանց, Յ. Շաղիւնեանց, Յ. Շալամեանց, Մ. Սուլիսանեանց Գ. Սուրբասեանց Ա. Տէր-Յակովբեանց, Ն. Փրիզոնեանց, Յ. Օթոյեանց Ս. կալուածատէրեր. Ս. Յուրիսեանց Ն. Նարիմանեանց, Կ. Հեջուրեանց, Կ. Հեջուրեանց, Գ. Ալէլեանցի. Բուդղանեանց, Զ. Գրիգորեանց, Ա. Երիցեան, Ա. Դորդանեանց դր. կառ., Ա. Միրիմանեան, Գ. Զմշկեանց յայտնի զերասան Մ. Զմշկեանց, Գ. Սուրբուկեանց իսկ. պետ. խորհրդ. Յ. Նսայեանց Բ. Բէրինեանց:

Սրբազանի պատուին տրուած ճաշկերոյթին մասնակցողների լուսանկարը գեղեցիկ շրջանակի մէջ. Նորին բարձր Սրբազնութիւնը ընդունում է շատ սիրալիր կերպով և օրհնում նրանց ու մասնակցողներին ցոյց տուած այդպիսի յարգանքի համար: (Նոր-Դար 1901 թ. № 174): Նոյնպէս ստանում է թանգագին ընծաներ Գորու հոգևորականներից և հասարակութիւնից:

1901 թուի Դեկտեմբերի 16-ին Գէորգ Արքեպիսկոպոսը մեկնում է Թիֆլիզից ս. Էջմիածին, ութը տարի խաղաղութեամբ իւր թեմը կառավարելուց յետոյ: (Նոր-Դար 1901 թ. № 192):

1902 թուի վերջում նա նորից վերադառնում է Թիֆլիզ վարելու իւր պաշտօնը: Բայց եկեղեցական կալուածների յարգունիս գրաւելու առիթով՝ 1904 թ. Յունուարի 8-ին Բարձրագոյն հրամանով արձակում է Թիֆլիզի առաջնորդութիւնից: Արձակման կոնդալի մէջ Մկրտիչ կաթողիկոսը գրում է. «հրաւիրում եմ Ձեզ, որ գաք ս. Էջմիածին և բնակիք ընդ հովանեաւ մեր և Մայր Աթոռի»:

Մայր աթոռ ժամանելուն՝ ընդունւում է պատուով և կարճ ժամանակից յետոյ մինչև անգամ Վեհափառ Հայրապետը անձամբ այցելելով Գէորգ Սրբազանին՝ յայտնում է իր ցաւակցութիւնը:

1905 թուին գրաֆ Վորոնցով-Դաշկովը նշանակուեց Կովկասի փոխարքայ և Վեհափառ Կաթողիկոսի կողմից Գէորգ Սրբազանը գալով Թիֆլիզ՝ ողջունեց գրաֆի Կովկաս ժամանելը: Փոխուեց Կովկասի կառավարութեան քաղաքականութիւնը և Մկրտիչ Կաթողիկոսի առաջարկութեամբ Գէորգ Արքեպիսկոպոսը 1906 թւի փետրուարի 16-ին բարձրագոյն հաճութեամբ հաստատում է Սինօդի անդամ: Այս պաշտօնում Մկրտիչ Կաթողիկոսի զառամելութեան պատճառով Գէորգ Սրբազանը ս. Էջ-

միաձնի ներքին վարչութեան մէջ գլխաւոր ղեկավարող դարձաւ:

1907 թ. հոկտեմբերի 29-ին Մկրտիչ Կաթողիկոսի մահուամբ իբրեւ Սինօգի աւագագոյն անդամ ստանձնում է կաթողիկոսական Տեղակալի պաշտօն, որ վարեց մինչև Մաթէոս Բ. Կաթողիկոսի օծման օրը 1909 թ. սեպտեմբերի 13-ը:

Մայր Աթոռը դրամական սղութեան պատճառով տագնապալից դրութեան մէջն էր: Գէորգ Սրբազանին յաջողում է Մայր Աթոռի տնտեսական դրութեան մէջ բարւոքումն առաջ բերելով՝ Մայր Աթոռն ազատել այդ տագնապից:

Իսկ ս. էջմիածնի Մայր տաճարը իր անշուք, խղճուկ և վերանորոգութեան կարօտ վիճակով մի նախատինք էր Հայ ժողովրդի համար և ազգային նախատինք օտար այցելուների առաջ: Գէորգ Սրբազանը տեսնելով Մ. Աթոռի այդպիսի դրութիւնը՝ մի խոհեմ նամակով դիմում է ազգային բարերար Ա. Մանթաշեանցին և նրա ուշադրութիւնն ու օգնութիւնը խնդրում Մայր Տաճարի պայծառութեան համար: Ա. Մանթաշեանը անմիջապէս յայտնում է իր պատրաստակամութիւնն և յատկացնում նորոգութեան համար 40,000 ռ., յայտնելով իր խնդակցութիւնը Գէորգ Սրբազանին, որ նորոգութիւնը կատարուելու է նորա տեղակալութեան օրով: Ահա բարեգործ Մանթաշեանի Սրբազանին ուղղած նամակը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ՏԵՂԱԿԱԼԻՆ

Աստուծոյ իմ Գէորգ Արքեպիսկոպոսին

Ստացայ Ձեր Սրբազնութեան 17 յունւարի նամակը և ս. էջմիածնայ Տաճարի մասին Ձեր բոլոր նկատումները կատարելապէս գնահատում եմ: Իմ կողմից ճարտա-

րապետ ուղարկելն աւելորդ եմ համարում և ուզում եմ, որ այդ նորոգութեան գործն ի կատար հանուի իմ միջոցներովս հետևեալ կերպիւ:

Ձեր Սրբազնութեան նախագահութեամբ մի փոքր յանձնաժողով պէտք է կազմուի, որի մէջ լինի բացի Ձեր Սրբազնութիւնից և Կոմիտաս վարդապետից, երկու կամ երեք անձինք Ձեզանից ընտրուած, և ս. Տաճարի նորոգութեան ու յարակից բոլոր գործերը կատարուին այդ յանձնաժողովի կարգադրութեամբ և հսկողութեամբ: Այդ նպատակի համար զրած եմ պ. Դաւիթ Խարազեանին, որ մեր Տիխիսի կօնտօրը յանձնաժողովիդ խնդրած գումարները հետզհետէ ուղարկէ Ձեզ, մինչև որ լրանայ 40,000 ռուբլի, որ կը լինի այդ գործին յատկացուած գումարի ամբողջութիւնը:

Խնդակցութիւնս եմ յայտնում Ձեր Սրբազնութեան Մայր Աթոռոյ Տեղակալ կարգուելուն առթիւ և առանձնապէս ուրախ եմ ս. էջմիածնայ Տաճարի նորոգութեան գործը, որ ամենամեծ ցանկութիւնս եղած էր, Ձեր Սրբազնութեան Տեղապահութեան օրովն է կատարուելու:

Ձեր Սրբազան սուրբ աջն համբուրելով՝ մնամ խոնարհ յարգանքօք և սիրով

Աղէքսանդր Մանթաշեան

Նիցցա 6—19 փետրւար 1908 թ.

Եկեղեցու վարչութեան գործը տարաւ ամենայն զգուշութեամբ: Յայտնի է նրա արձակած խելացի կարգադրութիւնը թեմական խորհուրդների և դպրոցական գործերի կառավարութեան վերաբերեալ, որտեղ Գէորգ Սրբազանը հանգիստնում է ժողովրդական սկզբունքների կողմնակից և պաշտպան:

Գէորգ Սրբազանը իր լուրջ ուշադրութիւնը դարձրեց Գէորգեան ճեմարանի տնտեսական կառավարութեան և

հաշիւները վրայ և պահանջեց դպրոցական վարչութիւնից այդ հաշիւները մէջ պահպանել մաքրութիւն և ճիշտ հաշւետւութիւն, որի համար և թշնամիներ վաստակեց: Նոյնպէս նրա նախաձեռնութեամբ հրամայուեց բոլոր ստորագրեալ հաստատութիւններին՝ կոնսիստորներին, հոգևոր կառավարութիւններին, վանքերին՝ կազմել ամեն տատարուայ ճիշտ նախահաշիւներ և ուղարկել այն սինօդին հաստատելու, որից յետոյ միայն կարելի էր գործադրել:

Դա նախընթաց չունեցող մի ձեռնարկութիւն էր, որով պարզուեց ամբողջ Ռուսաստանի Հայ թեմերի և Մայր Աթոռի եկամուտներն ու ծախսերը:

Մաթէոս Բ. Կաթողիկոսը յանձին Գէորգ Սրբազանի ունէր իրեն համակրող, անձնուէր մի գործակից և նա գոհ նրա պաշտօնավարութիւնից մահուան անկողնում Հայ եկեղեցու վարչութիւնը և Մ. Աթոռը վստահութեամբ յանձնեց նրան, ասելով՝ «Գէորգ Սրբազան այս տունը քեզ կ'յանձնեմ, պահի մինչև նոր զահակալը»։ Իզմիրլեանը սւրիշ անգամներն էլ քանիցս կրկնել էր՝ «Գէորգ Սրբազան, ես բախտաւոր եմ, որ Ձեզ պէս օգնական և գործակից ունեմ»:

Երջանկայիշատակ Մաթէոս Բ. Կաթողիկոսի մահւան պատճառով 1910 թուի դեկտեմբերի 11-ին սինօդի օրագրութեամբ Գէորգ Սրբազանը նորից ստանձնեց Կաթողիկոսական տեղակալի պաշտօնը:

Նորին Ամենապատուութեան այս անգամի պաշտօնավարութիւնը նշանակալից է նրանով, որ Մ. Աթոռը վճարեց ոչ թէ միայն այն բաւական մեծ պարտքը, որ հանգուցեալ Մկրտիչ Կաթողիկոսի օրով առնուած էր պետական զրամատնից, Մայր Աթոռի մայր գումարը կազմող ռենտաների գրաւականով, այլ նաև 40,000 ռ. տոկոսաբեր թղթեր ձեռք բերեց, այնպէս որ այժմս զանձարանը աւելի քան յաջող զրութեան մէջն է գտնուում: Զանգու

դետից և Սև ջրից առուներ բերելու գործի յաջող ընթացքով և Մայր Տաճարի վերանորոգութիւնը հերթական դառնալով:

Վեհաբանի շինութեան նախաձեռնութիւնը և մատենադարանի ներկայ շէնքը Գէորգ Սրբազանի ջանքերին են պատկանում:

Իբրև արթուն դէտ հսկում է թէ իւր տեղակալութեան և թէ սինօդի գործավարութեան ընթացքին, որպէս զի զեղծումներ կամ հակաօրինական թերութիւններ չլինեն:

Գէորգ Սրբազանի պաշտօնավարութեան մէջ նկատելի է վերին աստիճանի զգուշաւորութիւն, գործավարութեան արագութիւն, առանց տղմուկի, լռելեայն գործունէութիւն, անձուիրութիւն իւր ստանձնած պաշտօնին, հաւատարմութիւն դէպի եկեղեցին և եկեղեցական կանոնները, եկեղեցական իրաւունքների անձնուէր պաշտպանութիւն, հասարակաց ազգօգուտ կարծիքի գնահատութիւն, խորհրդակցութիւնների և խորհուրդների կարեւորութեան զիտակցութիւն:

Իւր բարւոք և անբասիր պաշտօնավարութեան ժամանակ նա վարձատրուել է Գէորգ Դ. Կաթողիկոսի կոնդակներով:

1875 թ. Մայիսի 5-ին ծաղկեայ փիլոնով և նոյն թ. Հոկտեմբերի 8-ին վարդապետական ականակուռ լանջախաչով. 1882 թ. Սեպտեմբերի 25-ին եպիսկոպոսական պանագէով:

Մկրտիչ Կաթողիկոսի առաջարկութեամբ բարձրագոյն Կայսերական հրովարտակներով 1894 թ. Ապրիլի 17-ին Վրդիմիրի III կարգի շքանշանով:

1898 թ. Ապրիլի 5-ին ս. Ստանիսլաւի I կարգի շքանշանով. 1908 թ. Ապրիլի 13-ին ս. Սնայի I կարգի շքանշանով: Ունի և արծաթէ շքադրամ ի յիշատակ Աղէքսանդր

Գ. Կայսեր թագաւորութեան:

Գէորգ սրբազանը պաշտօնավարելով դպրոցական ասպարիզում, որպէս տեսուչ և ուսուցիչ՝ պարապել է գրականութեամբ. թարգմանել է և տպել Իլովայսկու ընդհանուր պատմութիւնը, որ այն ժամանակ պետական միջնակարգ դպրոցներում ընդունուած դասագիրք էր. աշխատակցել է «Արարատ» ամսագրին թարգմանական յօդուածներով:

Իւր պաշտօնավարութեան բոլոր ընթացքում եղել է նախանձախնդիր եկեղեցիների պայծառութեան, դպրոցների բարեկարգութեան, հոգևոր կոչումը վսեմացնելուն և ժողովրդի արդար իրաւունքի, առանց ձրի ժողովրդականութիւն ձեռք բերելու հետամտութեամբ: Այժմ նոյն հոգով գործում է օժտուած ցանկալի առողջութեամբ:

Թիֆլիզի Հայ հոգևորականների մեծագոյն մասը, այն է 10 աւագ և 24 միաբան քահանաներ, ի նկատի ունենալով ազգի և եկեղեցու ներկայ վիճակը, ս. էջմիածնի Մայր Աթոռի համար արժանաւոր և ընտրելաւորն Կաթողիկոսական թեկնածու են համարում Տեղակալ Գէորգ Արքեպիսկոպոս Սուրէնեանին նրա առաքինի բարեմասնութիւնների համար: Այդ մասին նրանք իրենց ցանկութիւնն և հայեացքն արտայայտում են մի գրութեամբ իրենց ստորագրութիւններով վաւերացրած: Ահա այդ գրութիւնը.

«Ի ներքոյ ստորագրող Թիֆլիզի Հայ քահանաներս ի նկատի ունենալով ազգի և ս. եկեղեցւոյ շահերը՝ ս. էջմիածնի Մայր Աթոռի համար արժանաւոր և ընտրելաւորն Կաթողիկոսական թեկնածու ենք համարում ներկայ տեղակալ Ամենապատիւ Գէորգ Արքեպիսկոպոս Սուրէնեանցին, որին քաջածանօթ ենք, որպէս մեր նախկին


թեմակալ Առաջնորդի. գիտենք անձամբ նորա առաքինի բարեմասնութիւնները, աջալուրջ և քաջարթուն հրակողութիւնը, արդարութեան և օրինաց պաշտպանութիւնը, ազգի և եկեղեցու շինութեան պայծառութեան նախանաւորութիւնը և բարի սիրտը:

Ժամանակիս պահանջները, ներկայ պայմանները մեր ազգի և ս. եկեղեցու շահը և յառաջագիւմութիւնը և խաղաղութեան վերականգնումը՝ պահանջում են ս. էջմիածնի գահի վերայ տեսնել այնպիսի բարեմասնութիւններով, երկարամեայ փորձառութեամբ օժտուած ըստ ամենայնի կաթողիկոսական պատուին և պատասխանատու վեհ պաշտօնին արժանի ս. Լուսաւորչի Աթոռի մի ժառանգ:

Ընտրելով Ամենապատիւ Գէորգ Արքեպիսկոպոս Սուրէնեանին կ'բարեկարգւին և կ'պայծառանան Հայաստանեայց Առաքելական ս. եկեղեցին և Հայ դպրոցները, որի գրաւական է նորա այդ ուղղութեամբ վարած բազմարդիւն գործունէութիւնը՝ ինչպէս բարձրաձայն վկայում է նորա կենսագրութիւնը: Սա է մեր կարծիքով կաթողիկոսական ընտրելի արժանաւոր թեկնածուն:

20-նն Հոկտեմբերի 1911 ամի:» (34 ստորագրութիւն)

Թէպէտ լրագրական բազմաթիւ յօդուածների մէջ (Մշակ 1911 թ. № 223. Սուրհանդակ 1911 թ. № 281, 284, 401, Արեւելք 1911 թ. հոկտեմբերի. Հորիզոն 1911 թ. № 229. և այլն) համարում են Գէորգ Արքեպիսկոպոսին արժանաւոր թեկնածու կաթողիկոսական գահի համար, բայց աւելորդ ենք գտնում մէջ բերել այստեղ, որովհետեւ ամենամեծ ջատագովութիւնն և պաշտպանութիւնը նրա արժանիքների համարում ենք նրա արդիւնաւէտ և հաւատարիմ գործունէութիւնը և ժողովրդասէր ու եկեղեցասէր ուղղութիւնը, ինչպէս նաեւ տալիս կենսագրութիւնը:



ՆԿԱՏՈՒԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Կրիս	տող	տպագրուած է	պէտք է լինի
5	5	Բելախսեանի	Բելախսեանի
»	7	որ	ուր
»	9	որդիք	որդիքը
»	20	սուրէնեանցը	Սուրէնեանցը
6	1	Ազգի	Ազգիս
»	6	այնպէս	այնտեղ
»	32	Ամբողջ	Ամբողջ
7	27	Սինոդի	Սինոդի
8	17	որ	ուր
9	7	», բարեշնորհ	. «բարեշնորհ
»	17	Սինոդի	Սինոդի
»	28	սիրով	սիրով և
»	31	նորոգում:	նորոգում,
10	14	Ազուլեցիքը	Ազուլեցիք
»	27	դպրոց,	դպրոցը.
»	»	այստեղ	այստեղ
11	4	պաշտօնով	պաշտօնով
»	8	այդեպանը,	այդեպանը
»	13	կառավարիչը	կառավարիչը
»	23	կառավարչական	կառավարչական
»	28	հրազարդ	հրազարդ
12	16	եկեղեցին	եկեղեցի
»	28	իդձերի	իդձերին՝
»	30	հոգի	ոգի
14	28	փոխացէն	փոխարէն
»	30	ամեա-	ամեայ
15	8	Սուրէնեանցին:	Սուրէնեանցին»:
»	15	Սինոդն	Սինոդը
16	8	բնաւորութիւնն	բնաւորութեանն
»	16	Դէորդ	Դէորդ
»	29	մեզ	քիչ
18	21	դժուարութիւններ՝	դժուարութիւնները՝
»	22	1887 թ. է	է 1887 թ.
19	13	շուք է	շուք
21	31	ժողովուրդը	ժողովուրդը

22	26	Սյդ	Սյդ
25	1	Ահա	«Ահա
26	»	յետայ	յետայ
27	14	բազմութեամբ	բազմութեամբ
28	28	երկնարկանի	երկնարկանի
29	3	կարամուրդային	կարա-Մուրդային
»	11	զպրանոցում	զպրանոցում
»	31	երկայն	ներկայ
30	1	ուղղում այդ	ուղղում
31	7	գետեզը	գետեզը
»	20	ինքնատակցութիւն	ինքնագիտակցութիւն
»	30	յորդորում	յորդորում
32	30	գրուած.	գրուած
34	24—25	հրաւիրւած	հրաւիրուեց
35	9	ասաց	ասում
»	32	նշանակել և յիշեալ բառերի մէջ բաց է թողուած. և քաղաքային խորհուրդը յարգելով Սրբազանի միջնորդութիւնը որոշում է տարեկան 200 ուրբւ նշանակել	
37	27	չհաստատութիւն	ցհաստատութիւն
41	3	ժողովրդի	ժողովրդին
45	22	հայրապետական	հայրապետական
47	1	և շահում	և շահում այն:
75	6	գործերի	գործերին
59	8	զննելով	զննելով
61	10	գիւանը	գիւանը
»	13	գտնում էր	գտնում էր
»	23	չկայ	անգամ չկայ
»	28	սահմանել	սահմանել
62	2	աճրդի	աճրդի
63	11	վերայ	վերայ
»	»	Վերս	Վերս
»	9	մեք	մեք
64	31	Յոնհաննէս	Յովհաննէս



